կացեք, գնանք նազարի հետ, ջարդենք հոկաներին:

ԲՈԼՈՐԸ.—Գալիս ենք:

ՎԱՐԺԱՊԵՏ.—Յելք:

ՏԵՐՏԵՐ.—Յել, ժողովուրդ,

ՎԱՐԺԱՊԵՏ.—Ո՞վ ազգ ամենայն, գնանք թաջ նազարի յետելց,

փրկենք և ճաճանչավորվենք հայրենյաց փառքով:

ՏԵՐՏԵՐ.—Յել կամքն աստուծո որհնյալ յեղիցի:

ԲՈԼՈՐԸ.—Դե, ջանըմըն նազար, առաջ ընկի: Բերեք թաջ նա-

զարի ձին:

(Բերում են: Վագրի մորքին զցում են ձիու վրա, նա-  
զարին նսեցնում են վրան, իրան են տախու դրօնակը յեվ  
իրենք ուղապատելով նրան՝ պատրասվում են շարժիլու դե-  
պի ձախու):

ԹԱՐՄԱԴԱՆ.—(Գյուղուլիշիներին) Ապա մի զուռնա:

ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐԸ.— (Հանում են զուռնաները յեվ փշում):

ՆԱՇԱՐ.—(Հպարտ, տէկվելով ձիու վրա) Գյաղա: Առաջ ընկեք:

ԹԱՐՄԱԴԱՆ.—(Մյուսներին) Առաջ ընկեք:

ՍԱՔՈ.—(Մյուսներին) Առաջ ընկեք:

ԹԱՐՄԱԴԱՆ.—(Առաջ բնկնելով) Արեք: (Յեվ խկույն յես ե զալիս):

ՎԱՐԺԱՊԵՏ.—Հառաջ (Առաջ ե բնկնում յեվ յես ե զալիս):

ՏԵՐՏԵՐ.—(Յես յես զնալով) Ի զեն, առաջ:

ԲՈԼՈՐԸ.—Եհեց: (Կանգնած են տեղները):

(Հանկարծ նազարի ձին խրնում ե յեվ նրան տանում):

ԲՈԼՈՐԸ.—Հասեք... (Վազում են նրա յետիցի):

### ՎԱՐՄԱԴՈՒՅՑ

ԱՐԱՐ ՑԵՐՐՈՐԴ

## ՔԱԶ ՆԱԶԱՐԸ ՀԱԿԱՏԱՆՈՒՄ

Խորը անտառ: Հաստաբուն ծառերի բները գերանների պես  
ցցված մթնեցնում են խորը: Մի բացվածք ե գոյանում ուղիղ  
դիմացը, ուր բարձրանում ե հսկաների ցիկլոպյան ամրոցը: Մի  
բարե անկանոն սանդուխ ե իջնում ամրոցի դռնից: Մեջտեղը  
բացատ ե: Ազ ու ծախս շալիղներ:

ԽՈԶԵՆԻ.—(Խուռա աշերով, փիված հսկա: Գյխաբաց ե, մազերն  
ածիլված, միայն զազարին մի փունջ կա: Ցերկար բեխորը

հասնում են մինչեվ ականջները յեվ ավելի: Փուխի պես ե  
շնչում յեվ յերեխն ինչ վոր ձայն ե հանում, նման խոզի խոր-  
դալուն: Գլուխը դուրս նանելով ամրոցի ատամներից՝ դես դես  
ե մտիլ տախի) Համամմ...

ԴԱՆԳԻԶ.—(Ծովյ, դանդաղաշարտ հսկա, ինա յեվ ցավոս աշե-  
րով: Ամրոցի տախի խորքից ծոր ե տախի) ԽԱՌԿԵԿԵՆԻ:

ԽՈԶԵՆԻ.—(Նույնպես ծոր տախով) Ինչ է՛ է՛...

ԴԱՆԳԻԶ.—ԽՈՂԵԿԻ:

ԽՈԶԵՆԻ.—Համար է՛ է՛...

ԴԱՆԳԻԶ.—Մի մահկ տուր չորս կողմ, տես ինս, ջնաս, մարդ,  
քարավան չի ցերեռում:

ԽՈԶԵՆԻ.—Լամամալ (Նայում եջ որս կողմբ, հորանջում ե, կոտրա-  
վում յեվ ապա խորգում) Համմմ...

ԴԱՆԳԻԶ.—(Խորքից) Ղուղղուն, Ղուղղուղա... (Գլուխը դուրս հա-  
նելով) Ղառաղուղա...

ԽՈԶԵՆԻ.—Եստեղ չեն, եստեղ չեն:

ԴԱՆԳԻԶ.—Ո՞ւր են:

ԽՈԶԵՆԻ.—Ղորսի չեն, վորսի չեն, վորսի:

ԴԱՆԳԻԶ.—(Մի կերպ հասկանում ե, ապա գլուխը կծկելով ուսերի  
մեջ ներս ե ընկենում):

ԽՈԶԵՆԻ.—(Դեպի ամրոցի խորքը բեկվելով) Աղջի, Փերիշան...

ՓԵՐԻՇԱՆ.—(Միամիտ, խուռա աշերով մաքաղեմ հսկա աղջիկ:  
խորքից, յերկարացնելով մինչեվ ներս զալը) Ի՞նչ է՛ է՛...

ԽՈԶԵՆԻ.—Մեծ ապերը հրես կա վորսից: Պղինձները դիր կրակին:  
ՓԵՐԻՇԱՆ.—Լամամալ... (Ցերկարացնում ե մինչեվ ամրոցի խորք  
գնալով):

ԽՈԶԵՆԻ.—(Խուռա լի յեվ բեկվերը վոլորելով մտիլ տախս դես ու դեն):

ԴԱՆԳԻԶ.—(Խորքից) Խողենի...

ԽՈԶԵՆԻ.—Ինչ է՛ է՛...

ԴԱՆԳԻԶ.—Առված եմ:

ԽՈԶԵՆԻ.—Արի գոմեշ կեր:

ԴԱՆԳԻԶ.—(Գյուրս ցատկելով ամրոցից՝ փարարվում ե ամրոցի ա-  
տամներից մինին յեվ կծում ե բարը) Ո՞ւր ե, րեր:

ԽՈԶԵՆԻ.—(Հսկայաբար յեվ յերկար ծիծաղում ե) Հա, հա, հա, հա,  
փահ, փահ, փահ, փահ, հա,  
հա...

ԴԱՆԳԻԶ.—(Բոնելով նրան) Ծիծաղդ պրծի՝ բան եմ ասում: Ծի-  
ծաղդ պրծի՝ բան եմ ասում:

ԽՈԶԵՆԻ.—(Նարունակում ե ծիծաղել, կարծես այդ ծիծաղը մի ա-  
ռարկա լինի, վոր մտել ե նրա մեջ յեվ անկախ բան ե նրանից):

ԴԱՆԳԻԶ.—Տես պրծանվ ծիծաղդ, տես պրծանվ ծիծաղդ:

**ԽՈՉԵՆԻ.** — (Հանկարծ դադարելով) Հա, Պրծավ, Ի՞նչ ես ասում:  
**ԴԱՆԳԻՉ.** — Հոռորուղան եստեղ չի:

**ԽՈՉԵՆԻ.** — Վարսի յի գնացել, վորսի...

**ԴԱՆԳԻՉ.** — (Կանգ առնելով յեվ մտածելով) Ասում ես վորսի: (Ելի կանգ է առնում յեվ մտածում):

**ԽՈՉԵՆԻ.** — Տես, հասկացա՞ր:

**ԴԱՆԳԻՉ.** — (Կանգ առնելով յեվ մտածելով) Հա, հասկացա: (Ընկրմում է, Սակայն իսկույն դուրս գալով) Մեծ պղինձը յես պիտի ուտահմ:

**ԽՈՉԵՆԻ.** — (Ճղողում է) Բաաա, ք՞նչ թե. (Բանիխում է զլխին) Այ քեզ: (Դանգիկ լնկղմում է ցած) Համմմմ...

**ՓԵՐԻՇԱՆ.** — (Հանկարծ դուրս պրծնելով ամրոցի խորքից, ողբ հոստելով) Մարդահոտ եմ առնում...

**ԽՈՉԵՆԻ.** — Մարդահոտ... Համմմմ:

**ՓԵՐԻՇԱՆ.** — (Կոանալով դեպի ներեխ) Դուրսնթի... Մարդահոտ ե գալիս...

**ԴՈՐՈԽԻԹԻ.** — (Ելի հսկա, շեկ մազերով: Գլուխը դուրս հանելով) Մարդահոտ... (Հոտում է ողբ):

**ԽՈՉԵՆԻ.** — (Յույց տալով դեպի ձախ) Ղոռորուղա ապերը, Ղառաղուան:

**ՓԵՐԻՇԱՆ.** — Մեծ ապերն յեկավ, մեծ ապերն յեկավ (Ծափ է տալիս):

(Ձախ կողմից ներս են մտնում Դուռըուղան յեվ Ղառաղուան, առաջինը վիրխարի հսկա յի քավ նոներով, յերկրորդ՝ դիմելի փոքր, կարեահասակ հսկա յե, Յերկուսի գլուխն ել ածիլած է, միայն գազարներին բողած է մի-մի փունչ: Նախակներին բերում են արջ յեվ այլ վորսի կենդանիներ):

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — (Խորդալով ցած է դնում բեռը) Համմմմ...

**ԴԱՌԱՋՈՒԽԱ.** — Համմմմ... (Նույնակա ցած է դնում բեռը):

**ՓԵՐԻՇԱՆ.** — Մեծ ապեր, մենք բան գիտենք:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Համմմ... ի՞նչ:

**ՓԵՐԻՇԱՆ.** — Մարդահոտ ե գալիս...

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — (Յույց տալով ձախ) Համմմմ... այ, Ղոռզունը բերում է, ճամբին գտանք: Համմմ...

**ԴՈՒԶԴՈՒԻՆ.** — (Ներս է մտնում ձախից՝ տախկին Տերերը):

**ՓԵՐԻՇԱՆ.** — Բո, ես ի՞նչ բան ե:

**ԴԱՌԱՋՈՒԽԱ.** — Ո՞ւր քաշ տվիք սրան, հիվանդություն կբերի ճետը: Տարեք դե՞ն գցեք:

**ՓԵՐԻՇԱՆ.** — Ապի, ինձ տվեք՝ խաղամ:

**ՄՐՁԱԹՈԹՈՇ.** — Զե՛, իմն ե:

**ԽՈՉԵՆԻ.** — (Մոտենալով Տերերին, ժայտալով յեվ հետաքրից նայում է նրան, յեվ ապա գրկում է յեվ գցում Դորոնիքի գիրկը):

**ԴՈՐՈԽԻԹԻ.** — (Գցում է Դուզդունի գիրկը):

**ՄՐՁԱԹՈԹՈՇ.** — (Դուզդունի հ'նձ տուր:

**ԴՈՒԶԴՈՒԻՆ.** — (Գցում է Ղառաղուայի գիրկը):

**ԴԱՌԱՋՈՒԽԱ.** — (Գցում է Դանգիզի գիրկը):

**ՓԵՐԻՇԱՆ.** — (Լաց է լինում) Վեա:

**ՄՐՁԱԹՈԹՈՇ.** — (Նույնպես լաց է լինում) Բահ...

**ԴԱՆԳԻՉ.** — Փե՛, մեռելի հոտ ե գալիս, դեն գցեք:

**ԴԱՌԱՋՈՒԽԱ.** — Զուրը գցեք, թող տանի ..

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Զեեե... կացեք մի բան հարցնեմ:

**ՏԵՐՏԵՐ.** — Աման, որհնայիներ, բաց թողեք, սիրտս կճաքի:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Կաց... ինչն է հարևանություն չեք անում ել... ինչն է քանի որ ե՛ ել աղ չեք բերում մեզ... համմմմ...

**ՏԵՐՏԵՐ.** — (Վեր բռչելով) Բոլոր աղը մատաղի յենք տվել որհնային մատաղի յեկը մնացել:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Մատամազ... հօլ մատաղի Համմմ:

**ՏԵՐՏԵՐ.** — Մի քաջ մարդ ե ընկել մեր աշխարհը, մատաղ ենք անում աստծուն, վոր նրա պատուհասից մեզ ազատե:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Ի՞նչ մարդ ե, անունն ի՞նչ ե: Համմ:

**ՏԵՐՏԵՐ.** — Քաջ նազար:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Քաջ նազար... Ղառաղուում, քաաջ նազար... Ղոռնթի, քաաջ նազար... հա, հա, հա, հո, (հսկայաբար ծիծաղում է, Ծիծաղում են յեվ մլուսները մինչել տնեալը):

**ՏԵՐՏԵՐ.** — Դուք ծիծաղում եք, որհնայիներ, բայց Քաջ նազարը գերի յե արել մեր աշխարհը: Զարդում ե ու ջարդում:

**ԽՈՉԵՆԻ.** — Հա, հա, հա, հա...

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Հո, հա, հա, հա...

**ԴԱՌԱՋՈՒԽԱ.** — Հա, հա, վ՞նչ ե ջարդում: Համմ:

**ՏԵՐՏԵՐ.** — Զեզ համար հեշտ ե, բայց մեզ համար դժվար ե՝ որհնայիներ:

**ԴՈՌՈԲՈՒԴԱ.** — Համ, եղ մեկը դորթ ե համմմմ...

**ՏԵՐՏԵՐ.** — Ավելի գժվար ե հոգեորներիս համար: Բանի վոր աշխարհիս մեղքը մենք բառնում:

**ԽՈՉԵՆԻ.** — (Կիսովին վեր է կենում ու ժայտալով յեվ հետաքրից մտնում է Տերերին յեվ բռնելով նրա միրուի ձայրից՝ տուշում ե) Ես ի՞նչ ե:

**ՏԵՐՏԵՐ.** — Միրուքիս ծալըն ե, որհնայիլ:

**ԽՈՉԵՆԻ.** — Ի՞նչի՞ յե սուր:

**ՏԵՐՏԵՐ.** — Նվազ ենք, քիչ ենք ուտում:

ԽՈՉԵՆԻ. — Վա՛յ, քիչ եք ուտում, խեղճ: (Միրուբը բռնած դես դեն ե բառում Տերերին):

ՏԵՐՏԵՐ. — (Խեղճ ու լացակումած ձայնով), Այո որհնչալ, մենք ասուտծո փոխանորդն ենք: Քիչ ենք ուտում, վոր յեթե աշխարհիս բեռը շալակներիս բարձրանանք յերկինք, աստծո մոտ՝ թեթև լինենք: Այո, մենք աշխարհի ծառաներն ենք: Աղետ և լինում՝ աղոթում ենք, և զրա փոխարեն միքիչ ցորեն, միքիչ յուղ ենք հավաքում և համեստ ապրում: Խսկ յերբ աշխարհում ջարդ ե լինում՝ լաց ենք լինում այսպես: (Լաց լինելով) Մես:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Լավ մարդիկ եք դուքք...

ՏԵՐՏԵՐ. — Այո, որհնչալ լավ մարդիկ ենք:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Ապա եղ քաջ նազարը ինչի՞ է ջարդում ձեզ: Համամ:

ՏԵՐՏԵՐ. — Մեզի ջարդում շատ: Ավելի շատ հսկաներին ե ջարդում:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Բո՞տ...

ՏԵՐՏԵՐ. — Մին զարկում ե, հազար ջարդում:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Բո՞, վո՞նց թե ...

ՏԵՐՏԵՐ. — Դրոշակ ունի ձեռին, սրբոց ձեռամբ գրած՝ թե՝ անհաղթ նազար, քաջն նազար, մին կզարկի, ջարդի հազար: (Լացակումած) Այս, որհնչալներ, կրակ ե դժոխալին, հուր աստվածալին:

ՂՈՐԾՆԹԻ. — Հը... վախեցնում ես...

ՂԱՌԱՋՈՒԹԱ. — Փի, թե վախեցը ես՝ համամմ...

ՏԵՐՏԵՐ. — Զե, որհնչալ, չե, ճշմարիտ ե, վկա աստված կենդանի: Այդ քաջ նազարը ձեղնից մեծ ուժի տեր ե:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Բո՞ն...

ՏԵՐՏԵՐ. — Այս, որհնչալներ, փախեք՝ քանի չի յեկել:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Փիե... ինչ ե ասում:

ՏԵՐՏԵՐ. — Աման, որհնչալ, ճշմարիտն եմ ասում: Փախեք, ապատվեցեք: Դուք ձեր հսկաներն եք տեսել, չեք տեսել Քաջ նազարը: Քաջ նազարը գալիս ե վոճնչացնելու հսկաների ցեղը: Ահավասիկ, ամեն ասեմ ձեզ, և պատմեմ, զոր տեսի աշոք իմոք և լվա ականջոք: Տեսիլ զարմանահրաշ: Հինգ հարյուր հսկաներ իմ աչքի առջև ջարդեց, փշրեց, փոշի շինեց, տվեց քամուն: (Ծոցից հանելով մի մասնատուի յեվ պտղուցով հանելով մի փոժի) Ահա, ես մի հատիկ փոշին մնաց, այն ել յես վերցրի հիշատակ: (Լաց և լինում) Մես...

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — (Սասիկ աղդիած) Ղորոնթի, մի փոշի չե մնացել... Ղառաղուում... Ղուղղուն...

ՂԱՌԱՋՈՒԹԱ. — Ախր ձեզ ասում ելի՛ ես մեռել ուտողին մի բերեք զեսը: Տեսամք վոնց խելքդ գողացավ:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — (Գլուխար բռնելով) Գողացամի. համմմ... (Տերերին) Գողացամի... համմմ...

ՏԵՐՏԵՐ. — Զե, աստված մի արացե:

ՂԱՌԱՋՈՒԹԱ. — (Մուտեալով Տերերին) Քեզ չասի թե մի վախեցնի: Ճզմեմ:

ՏԵՐՏԵՐ. — (Պուռուղայի բամակը մտնելով) Կանիծեմ...

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Բո՞, բո՞...

ՏԵՐՏԵՐ. — Կանիծեմ, վոր ձեզ ել նազարը ջնջի, գնի մասնատուփը: (Ուզում ե դուրս գալ հսկաների ողակից) Մի ճամբա վոր տայիք՝ լավ կլիներ: Եստեղ մի քիչ շոգ ե: (Հեվում ե սարսափից):

ՂԱՌԱՋՈՒԹԱ. — Զե, չենք թողնի: Դու մեզ թլիսմ արիր: (Պուռուղային) Քեզ թլիսմեց: Բանի ու բաց մի թողնի զբան, մինչեւ թլիսմը չանցնի:

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Հը... (Շալակում ե Տերերին):

ԽՈՉԵՆԻ. — (Նայելով դեպի ձախ) Մէծ ապեր, մէծ ապեր, են մկրքեր են: (Ցույց ե տախ ձախակողմը):

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — Հը...

ՏԵՐՏԵՐ. — Աման, քաջ նազարն ե:

ՀԱԿԱՆԵՐ. — Հնամմմ...

ՂԱՌԱՋՈՒԹԱ. — Բերդը մտեք: (Վազում ե ամրոցը, մյուսները հետեւկում են երան):

ՂՈՌՈԲՈՒԴԱ. — (Գրկած փախցնում ե Տերերին):

(Բոլոր հսկաները պահվում են ամրոցի մեջ: Զախից ներս են մտնում նազարը, Թամալան, Առույզ Ծերուկը, Սաբոն, Վարձապետը յեվ մյուս զյուղացիները):

ՄԻ ԳՅՈՒԴԱՅԻ. — Ախպեր, ես մեր Տերտերը գնաց հսկաներին գտնելու ինքը կորավ:

ՎԱՐԺԱՊԵՏ. — Գնաց շահատակ, ընկավ նահատակ: Հայրենյաց համար: Հառոջ...

ԹԱՄԱԴԱ. — Ե՛, լավ, Տերտերը կորավ: Բա հսկաներն ուր կորան:

ՆԱԶԱՐ. — Հսկաները կորչեն: Դլուխներդ կշարդեմ, թե կորցրել եք: Քաջ նազար եք բերում եստեղ ու հսկ յեք կորցնում: (Սաբոն) Գյաղա, շուտ, զնա բեր եղ հսկաներին: Գտաք թե չե ինձնից հրաման: — վրա տվեք, ինձ մի նայեք: Յես գիտեմ իմ անելիքը: Իմացամք: Դե, զնացեք:

ՎԱՐԺԱՊԵՏ. — Սաքո՞ն, զնա՞:

**ՍԱՐԺ. — Ես սհաթին** (Կրմիկի վրա պտույթ ե գործում յել կանգնում  
տեղուտեղը: Մյուսներին) Գլադեք, գնացեք:

**ՄՅՈՒԽՆԵՐԸ. — (Դրսից՝ ուրիշներին)** Գլադեք, գնացեք:

**ԲՈԼՈՐԸ. — (Կանգնած են իրենց տեղը յել վոչ վոչ չի գնում):**

**ԹԱՄԱԴԱ. — Ե՞ն, հապա մի նստի, վորդի, հաց անուշ անենք:**

**ՎԱՐԺԱՊԵՏ. — Նստիր, հերոս, նստիր: Թող քաջությանդ կատա-**

**ղությունը իջնի պահ մի:**

**ԹԱՄԱԴԱ. — Գինու տիկը բերեք (Բերում են դնում նազարի,  
Թամադայի, Վարժապետի յել մի յերկուսի առօտել: Մրանք  
նստում են յել սկսում ուտել-խմել):**

**ԹԱՄԱԴԱ. — (Գոռում ե) Ե՞ս, հսկաներ, վոր ծակն եք մտել...**

**Հիմի գուրս արիք, ե...**

**ՆԱԶԱՐ. — Կամաց, մի գոռա, չփախչեն:**

**ՄԻՆՔ. — Նազար ախպեր, արի եղ հսկաներին ես մեկ անգամը  
ներիք, մեղք են:**

**ՆԱԶԱՐ. — Չե, ել չխնդրվեք, վոր չեմ ընդունի: Ես մեկ կոիվ ե  
ու աստված: Սըանց պիտի չնշեմ:**

**ՄԻՆՔ. — Զանըմսըն նազար, եղ վճնց ե, վոր չես վախում:**

**ՆԱԶԱՐ. — Վախ. ինչ բան ե վախը: (Խմում ե):**

**ՄԻՆՔ. — Բա քաջությունն ինչ տեսակ բան ե, վոր քաջերը միշտ  
եսպես են խոսում:**

**ՆԱԶԱՐ. — Քաջություն... զարտակ բան ե քաջությունը: Ահա  
եսպես բննում եմ հսկաներին, եսպես խփում, գլուխները  
թռցնում. դա յեղավ քաջություն: Այ, քաջությունն են ե,  
վոր իմանաս, թե ինչ բան ե վախը: (Խմում ե):**

**ՄԻՆՔ. — Այ ջանըմսըն. բան ենդուր ես անվախ կովում, ե:**

**ՆԱԶԱՐ. — Կոիվ. մվ ե կովում: Հենց գիտես թե լես: Կոիվը ինքը  
իրան-իրան կովում ե: Կովի միջին իսկի միտս ել չի, թե  
կովում եմ:**

**ՄԻՆՔ. — Խոսքդ շաքարով, թաջ նազար, հսկա շատ ես ջարդել:**

**ՆԱԶԱՐ. — Բի... հսկա... (զինի յել լցում ու խմում) ճանձի չափ...  
ՎԱՐԺԱՊԵՏ. — (Դուրս ե նայում ամրոցի առանձներից. նրան հե-  
տեւում են Պոռորուղան յել մյուսները):**

**ԹԱՄԱԴԱ.**

**ՎԱՐԺԱՊԵՏ. — { (Անհանգիս շարժում են անում):**

**ՄԻՆՔ.**

**ՆԱԶԱՐ. — (Վեր ե բոշում) Հը, հսկաներն են:**

**ԹԱՄԱԴԱ. — Չե, դու քո բանը պատմի:**

**ՆԱԶԱՐ. — Գինի տվեք: Եղ հսկաները վոր չկան սիրտս շատ-  
տիսուր ե: Համա մի անգամ...**

**ՎԱՐԺԱՊԵՏ. — Լսիր, ժողովներդ, լսիր:**

**ՆԱԶԱՐ. — Կոիվ յեղավ մի անգամ, գլադա, Գոգ-Մագոգաց աշ-  
խարքում: Հսկաներ յեկան վրաս: Հարդուրը յեկան՝ փրթեցի:  
Հազարը յեկան՝ փրթեցի: Հետո յեկան, յեկան, յեկան...  
Գալիս են, փրթում եմ, գալիս են, փրթում: Վերջը ձեռքիս  
թողի, ինչ ուզում ե թող ինքը անի: Եսպես ջարդելով-ջար-  
դելով հասա Հարեցստան: Են ե՞ յերբ զարթնեցի՝ անսա, վոր-  
բոլորին ել փոշի յեմ գարձրել տվել քամուն: (Հանում ե  
մի շոր փարարած կտոր) Ե՞ս մի հատիկ փոշին և մնացել  
եղ հսկաներից հիշատակ: Մինն ել տերաւերի մոտ ե:  
ՀՍԿԱՆԵՐԸ. — (Գլուխները հանում են յել հետարքիր նայում են  
փուռ հատիկին):**

**ՆԱԶԱՐ. — Ես ե սկաների զլուխն ել կտրեմ ու պրծնեմ:**

**ՀՍԿԱՆԵՐԸ. — (Գլուխները պահում են):**

**ԹԱՄԱԴԱ. — Ե՞ս, հսկաներ, վոր ծակն եք մտել. Հիմի դուրս արիք, ե:**

**ՆԱԶԱՐ. — Կամաց, կփախչեն:**

**ԹԱՄԱԴԱ. — Վախում եմ թե փախել են:**

**ՎԱՐԺԱՊԵՏ. — Հաղթություն, փախավ թշնամին: Հերոսական հաղ-  
թություն:**

**ԹԱՄԱԴԱ. — (Զուռնացիներին) Ապա մի գուռնա:**

**ԶՈՒՌՆԱԶԻՆԵՐԸ. — (Ածում են մի զվարք յեղանակ):**

**ՆԱԶԱՐ. — (Վեր ե բոշում տեղից յել դրուակը սազ անելով սկսում  
ե յերգախառն արտասանել):**

**Զեռս զցեք, հռւմ-հռւմ ուտեմ դրանց յես,**

**Վուկորները կըչըր-կըչըր ջարդոտեմ.**

**Զեռս զցեք, փոշի շինեմ քամու պես,**

**Յերկինք հանեմ, հետքն ու փոշին կորցնեմ:**

**Ե՞ս, վրտեղ եք, մելքան արիք, հսկաներ,**

**Գլուխներդ ֆոռացնեմ, զցեմ վեր:**

**ԲՈԼՈՐԸ. — Այ ջան, այ ջան, այ ջան:**

**ՆԱԶԱՐ. — Քաջ նազարն եմ, նազարաշեն քաղաքից:**

**Ցեղս ազնիվ, ապուպապս թագավոր.**

**Թում, զարկի ինչպես կայծակ յերկնքից:**

**Կրակն յելավ, բռնեց աշխարք, սար ու ձոր:**

**Ե՞ս, վրտեղ եք, մելքան արիք, հսկաներ,**

**Գլուխներդ ֆոռացնեմ, զցեմ վեր:**

**ԲՈԼՈՐԸ. — Այ ջան, այ ջան, այ ջան:**

ՆԱԶԱՐ.—Գլադա, եղ հսկաներին բերեք. աղցան շինհմ դրանց,  
 մի ճանկս գցեցիք դրանց վոսկորները, մի հսպես կըշբաց-  
 նելով ջարդեմ, ջարդմըթեմ, փշրտեմ, տամ քամուն, ե:  
 ԹԱՄԱԴԱՐ.—Հակառակի պես չեն ել յերկում:  
 ՆԱԶԱՐ.—Ենքան գոռացիք, վոր ել հսկմ կմնա: (Սաբոյին) ՀԸ<sup>o</sup>,  
 ի՞նչ խարար:

ՍԱՐՈ.—(Ներս զալով) Շատ փնտրեցինք, չկան:  
 ՄՅՈՒՄՆԵՐԸ.—(Ներս զալով) Քաջ Նազար, հսկաները չկան:  
 ՆԱԶԱՐ.—Զկան: Եղ եք ուզում, վոր ասեք՝ չկան: Եղ ի՞նչ խոսք  
 եր՝ իմացաւ եսքան տեղը Քաջ Նազար եք բերում ու կանգ-  
 նում թե՝ չկան: Դեհ, հոգիներդ պահ տվեք: (Վեցնում ե  
 մտակը յեվ հարձակվում Սաբոյի յեվ մյուսների վրա):

ՍԱՐՈ.—Քաջ Նազար, բաշխի:  
 ԹԱՄԱԴԱՐ.—Ես մեկը բաշխի:  
 ՆԱԶԱՐ.—Թողեք, սրանց պիտի վերջացնեմ: (Խփում ե Սաբոյին  
 յեվ մյուսներին):

ԲՈԼՈՐԸ.—Քաջ Նազար, բաշխի...

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—(Գլուխը հանում ե ամրոցից):

ՍԱՐՈ.—(Տեսնելով նրան) Փախեք: (Փախչում ե):

ԹԱՄԱԴԱՐ.—ՀԸ<sup>o</sup>... (Փախչում ե):

ՄՅՈՒՄՆԵՐԸ.—Աման... (Փախչում են):

ՆԱԶԱՐ.—(Մտակում ե ծառերը) Վժնց թե չկան:  
 ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Վեր բռչելով) Բռ, բռ..., (Մտափած դուրս ե վա-  
 զում դեպի Նազար): Համմ...

ՄՅՈՒՄՆԵՐԸ.—Հետեվում են նրան յեվ բոլորը տրջապատելով Նա-  
 զարին բախվում գետնի վրա):

ՆԱԶԱՐ.—(Փախչում ե դեպի Պուռքուղան):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Համմ... (Աղաշական, բազկատարած սողում ե  
 դեպի նա): Բաշխի...

ՆԱԶԱՐ.—Ա՛մա... (Փախչում ե դեպի Պուռքին):

ՂՈՐԾՆԹԻ.—Համմ... (Բազկատարած սողում ե դեպի նա): Բաշխի...

ՆԱԶԱՐ.—Ա՛մա... (Փախչում ե դեպի Պուռքունը):

ՂՈՒԶԴՈՒՆ.—Համմ... (Բազկատարած սողում ե դեպի նա):  
 Բաշխի...

ՆԱԶԱՐ.—Ա՛մա... (Զանազան կողմեր ե վազվում յեվ հանկարծ  
 վախի կատաղուրյան մեջ գոռում ե) ԵՅԵՒ...: (Բոնում ե ծառի  
 բնից):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—(Բաց բռնելով Տերտերին, չոփեց վազում ե նրա  
 մոս): Ոճախդ ենք ընկել, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.—ԲԸ, ԲԸ, ԲԸ...

ՄՅՈՒՄՆԵՐԸ.—Ոճախդ ենք ընկել, Քաջ Նազար, բաշխի:  
 ՏԵՐՏԵՐ.—Թողություն արա, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.—(Տերտերին տեսնելով) ՀԸ<sup>o</sup>...

ՏԵՐՏԵՐ.—Հաղթվել են, խնայիք, մեղավոր են...

ՀՄԿԱՆԵՐ.—Բաշխի, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.—Կասկածու նայում ե Տերտերին, հսկաներին յեվ ապա  
 զիսի բնկեցելով՝ ուժի յեվ զալիս) ՀԸ<sup>o</sup>, եսպես եր յեղել բանը:  
 Ապրես, Քաջ Նազար (Վախեցած մտիկ և տալիս Պուռքու-  
 ղային):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—(Ճակատը գետնին զարկելով յեվ բարձրացնելով):  
 Քաաջ Նազար, լսել եինք անունդ, քեզ չելինք տեսել:  
 Շատ աղաչանք ենք անում զամ գառնաս մեր մեծավորը,  
 մենք եր կգառնանք քո ճորտը: Հրամայիք, աշխարք քան-  
 դենք, բերենք վոտդ: Մինակ բաշխի մեզ:

ՆԱԶԱՐ.—Գլագա, ի՞նչ ե ձեր աշխարքի անունը:

ՏԵՐՏԵՐ.—Տիտանստան:

ՆԱԶԱՐ.—Տիտանստան: Լավ: Բաշխեցինք:

ՏԵՐՏԵՐ.—(Խաչակնելով) Խաղաղություն ամենեցուն: (Խինն իրեն):  
 Հազիվ աղատվեցինք: Որհնաւալ լինիս, ով քաջ: (Լուուրյուն):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Համ: Հրաման ե, վեր կենանք, մեծավոր:

ՆԱԶԱՐ.—Վեր կենանք: (Մտածում ե) Վեր կացեք ու... մի քիչ  
 հեռու կանգնեցեք:

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Թուրդ հանի, մատադ, տակով անցնենք:

ՆԱԶԱՐ.—(Հանում ե բուրը յեվ հսկաներն անց են կենում  
 լուուրյուն):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Հիմի ի՞նչ հրամայես, մեծավոր:

ՆԱԶԱՐ.—Վոչինչ չեմ հրամակում: (Են դեմ ե նայում, վոր հնար-  
 յանի փախչելու: Ման ե զալիս):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—(Հետեվում ե նրան) Հիմի վժնց ե ուզում սիրու-  
 ցում: Համմ...

ՆԱԶԱՐ.—(Տարակուսանենով) Սուփրան: Եստեղ բաց արեք: Ես-  
 տեղ, ներսը մութ կլինի:

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—Վժնց վոր քեփդ ե, մատադ: (Նազարի յետելից մաս  
 գալով) Քաջ Նազար: Չես նստում, համմ, մատադ:

ՆԱԶԱՐ.—ՀԸ<sup>o</sup>... (Նստում ե յեվ տարակուսանենով մտիկ տալիս հսկա-  
 ներին):

ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.—(Նսելով նրա մոս յեվ դառնալով մյուս հսկանե-  
 րին) Ի՞նչ եմ ասում... ձաշ պատրաստեցիք, համմ...

ՀՄԿԱՆԵՐ.—Աչքներին վրա (Հեռանում են):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Նրանց լետելից) Արջեր շամփրեցեք: (Ավելի բարձր) Համմամ, զոմեհներ խաշեցեք: (Ավելի բարձր) Համմամ, ուղտեր տապակեցեք: Համմամ. .

ՆԱԶԱՐ. — (Ամեն նոր ժետին վեր և բռչում տեղից):

ՀՍԿԱՆԵՐ. — Շամփրում ենք, ապեր, տապակում ենք: (Ընկնում են ծառերի մեջ յեվ հսկայական շարժումներով, լայն բայլերով ու արագ սկսում են ծառերն արմատահան անել, մտնում են ամրոցը, դուրս են բերում ահազին բարախներ, դանակներ. վերցնում են ամազին բարեր, դնում իրար կողքի խարույկի հոտեար):

ՆԱԶԱՐ. — (Սարսափից ժիրը ված) Հակա ախպէր ..

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Անհանգիս) Համմամ...

ՆԱԶԱՐ. — (Նրանից վախենալով լուռ նսում և տեղը):

ՓԵՐԻՇԱՆ. — (Հանկարծ Փերիւսներ սայրաթելով թնկնում եմի ծառի վրա, ծառը ջարդվում ե յեվ բափում նազարի առջեվ, նազարը վեր և բռչում: Խոզենին ծիծաղում ե, մյուսներ վարակվում են. հանկարծ փոքրկում ե նայեվ Պոռոբուղան. Ակսում ե հսկայական ծիծաղի մի փորորիկ. նազարը վեր և կենում տեղից յեվ սկսում ե դարձյալ անհանգիս անց ու դարձ անել):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Նորից նետելով) Քաջ տղերք են, մեծավոր, լավ կովել գիտեն:

ՆԱԶԱՐ. — Զենները թող կտրեն:

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — Զեններդ կտրեցեք:

ՀՍԿԱՆԵՐ. — (Առում են: Միայն Խոզենին ծիծաղը չի կարողանում զափել, հսկաները վրա յեն բափում յեվ սկսում բափել) Պրծակ, պրծակ: (Նարունակում են իրենց գործը):

ԱՐՁԱԹՈԹՈՇ. — (Առում ե պոկել նազարի զիսամերել մի ծառի մեջ ճյուղ):

ՓԵՐԻՇԱՆ. — (Արգելելով նրան) Մի պոկե, մի պոկե, փթած և: (Արօքորոշին նետում ե դեպի խորք):

ՀՍԿԱՆԵՐ. — (Վերջացնում են ծառ պոկելը յեվ սկսում են պղինձերը դնել խարույկի վրա):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Նկատելով նազարի մտահոգ դեմքը) Սիրտդ նեղանում ե, համմամ... Մի արջ բերեմ պատուեն:

ՆԱԶԱՐ. — (Վախեցած) Զե, հարկավոր չե:

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — Լավ խոշորները կան: (Մյուս հսկաներին) Համմամ, ձաշը բերեք:

ՀՍԿԱՆԵՐ. — Բերում ենք: Համմամ...

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — { (Բերում են պղինձը դնում նազարի առաջին):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — {

ՓԵՐԻՇԱՆ. — (Թեկիներ բարձր կոխում ե պղինձը, խառնում ե շերեփով):

ՀՍԿԱՆԵՐ. — (Թրփալով նսում են տուրջը):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Նազարին) Համմամ... մանուշ արա, մատաղ, սիրտզ ինչ և ուղում: Յեղ համմամ... (ավելի բարձր) մւզու, համմամ... փիզ, համմամ... (թեկիներ բարձր կոխում ե մսի խոռու կտորներ յեվ դնում նազարի առջեվ) Անուշ արա: (Մյուսներին) Կերեք: (Ինքը խոռում ե մի մեծ կտոր, մյուսները նույնպես թեկիներ բարձր բարձր կոխում են պղինձի վրա ու սկսում են լափել):

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. Համմամ... մուռունեափկ, խմաց տնար թագավորին, թող գա կոիզ անենք: Ասա Փերիշանին քեզ կնիկ չենք տալու: Ասա ել մեր թագավորը չես:

ՄՈՒՆԵՑԻԿ. — Աչքիս վրա: (Ածում ե պարկապզուկը՝ ձախ ձեռքի մասներով, իսկ աջով վրա ն զուռնան) Ե՞ս թագավոր, քեզ իմացում: Փերիշանը քեզ չենք տալիս: Ել մեր թագավոր չես: Արի կոիզ անենք:

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. (Վեր և բռչում) Համմամ...

ՆԱԶԱՐ. — (Յեցիվելով) Մնար մի ուրիշ անգամ: Խմանում ես:

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — (Գես դեն թնկնելով, անհամբեր, կովի տամադրված) Խմանում եմ, մատաղ, խմանում եմ... (Հսկաներին) Լավ զինվեցեք. կոիզ պիտի տանք... Համմամ... (Նառաջ հանելով հազնում ե զենք ու գրահր: Հսկաները նույնպես: Ապա բարձրանում ե ամրոցը, այնտեղից դիմում ե շրջակային. վազում ե վարձյալ պտույտներ զործում դես ու դեն):

ՆԱԶԱՐ. — (Նրա լետելից ման զալով) Ծ, Ծ, գյաղմ, ինչ եմ առում... Խաղաղությունն ապկելի լավ ե.. Խմանում ես:

ԴԱՌՈԲՈՒԻՂԱ. — Հը. հմ (Մելենաբար կրինում ե) Խաղաղությունն ապկելի լավ ե: (Վազում ե նորից ամրոցի զլուխը յեվ իջնում ցած): Համմամ... լիկան:

ՄՈՒՆԵՑԻԿ. — Դեսպան լիկավ թագավորից:

ՆԱԶԱՐ. — (Հազում ե) Ծչը'...

ԴԵՍՊԱՆ. — (Մտելով ձախից):

Այդ ինչ մարդ եք բերել ընտրել ձեր աշխարհին տեր ու իշխան.

Թագավորին չեք հարցըրել ու անպատճել այսպես նրան:

Շեւտ, վար առեք այդ նոր պիտին,

շղթա զրեք ձեռն ու վատին,

հիմա կզա թագավորը սեացնելու դրա որը:

**ՆԱԶԱՐ.**—(Դողից ատամները կափկափելով, դես ու դեն ե ընկերում) Բը՛, բը՛, բը՛... ես ել քեզ նոր խաթա... Տեսնենք վրնց ես պրծնում:

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Կորի՛, գնա՛, անխելք մարդուկ, Քաջ Նազարին չեք տեսել դուք, տեսել եք ձեր թագավորին, մժեղ-մլակ ձեր զորքերին: Գնա՛, ասա թագավորին, վոր ել իրեն չենք ճանաչում, ճանաչում ենք Քաջ Նազարին, ասաված վերև, նա՛ ձեր միջում:

**ԴԵՄՊԱՆ.**—Կերթամ կասեմ թագավորին, գա սև կապի թող ձեր որին: (Գորում ե):

**ՆԱԶԱՐ.**—(Ճամբար վորօնելով վախչելով) Զանըմ, ես իմ ձին ուր ատառն: (Ման ե գալիս անհանգիս):

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—(Հսկաներին): Համմմ... զենք կապեք, պատրաստվեցեք, Քաջ Նազարին հետեցեք, յեկեք մեջտեղ, շարպեք մի-մի, կոիվ պիտի բացվի հիմի: (Փողեր են փշում):

**ՄՈՒՆԵՑԻԿ.**—Թշնամիները լերեացին...

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Համ... Բերեք շուտով Նազարի ձին:

**ՆԱԶԱՐ.**—Գյագնա, մի ուրիշ անգամ կանելիք: (Հազում ե): Ի՞նչ դրա ժամանակն եր:

**ՀՍԿԱՆԵՐ.**—Մեջտեղ բերեք Նազարի ձին, թշնամիներն լերեացին:

**ԺՈՂՈՎՈՒՐԻ.**—Ապրի մեր պետ Քաջն Նազար, վրնց պիտ ջարդի հարցուր հազարամ շարժում են աջակողմին: Հսկաները, բացի Դոլոր զինված շարժում են աջակողմին: Հսկաները, բացի Դոլոր զինված շարժում են աջակողմին: Հսկաները, բացի Դոլոր զինված շարժում են աջակողմին: Ապա հետզինեւ զորեւի զոռոց):

**ՄՈՒՆԵՑԻԿ.**—Զարք ե գալիս, պահ, պահ, պահ, պահ,

**ՀՍԿԱՆԵՐ.**—Զարք ե գալիս, վահ, վահ, վահ, վահ:

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Քաջ Նազարը եստեղ ե համ...

**ՀՍԿԱՆԵՐ.**—Փախչենք, ապեր, շատ են, վայ, վայ:

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Ուր եք փախչում, շատ լակուսեր: Հոգիներք կհանեմ համ, Քուրզերդ ամուր բռնեցեք:

**ՀՍԿԱՆԵՐ.**—Մեծ ապեր, արի տես, շատ են:

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—(Բարձրանում ե ամրոցը) Բոհ... ես ինչ ե: (Վայրի ջեղելով յեվ ընկնելով նազարի վոսները) Համմմ... աման, Քաջ Նազար:

**ՆԱԶԱՐ.**—Աման:

**ՀՍԿԱՆԵՐ.**—(Նույնպես ընկնելով նազարի վոսները) Աման, Քաջ Նազար:

**ՆԱԶԱՐ.**—Աման: (Առանց զենիքի դուրս է փախչում):

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Ուր ե գնում առանց զենքի: Բռնեցեք:

**ՀՍԿԱՆԵՐ.**—(Բոնում են նազարին յեվ յետքելով, զենիք են կապում նազարի վրա):

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Բերեք մեր ձին: (Բերում են): Նստեցեք:

**ՆԱԶԱՐ.**—(Սասիկ անհանգիս ե: Չորս կողմն ե նայում, վոր նամբար գտնի փախչելու յեվ յերկյուղից հետզինեւ ձայնը բարձրացնելով) Ընը՛ ը՛... Կոհի ե... տեսնեմ վրնց ես պրծացնում քեզ, այ ջանըմսըն, հայ-հայ...

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Հիմի, մատաղ, հիմի: Համբերի:

(Սակայն նազարը մի հետար ե ուզում գտնել փախչելու: Հանկարծ աշբը զցում ե փրած ծառի փոսին, վոր կախված ե իր գլխի վերեվ: Նարժուաներ ե անում, վոր հարմարեցնի այնտեղ բարձրանալու: Հեռվից աղմուկ ե լսվում, վոր զալով սաստկանում ե):

**ԹԱԳԱՎԱՐՈՐԻ ԶՅՅՆ.**—(Աջից) Ուր ե անզգամ ապստամբը, առաջ բերեք:

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—(Դուրս նայելով) Պինդ կաց տեղդ, հիմի կգա: (Նազարին) Դե, քեզ տեսնենք, Քաջ Նազար:

**ՀՍԿԱՆԵՐ.**—Վրա առւր, Քաջ Նազար:

**ՆԱԶԱՐ.**—(Գոռում ե ամից) Եհեր... (Շուռ ե գալիս յեվ նստմ յերեսը զեպի ձիու զավակը, ու ձեռները զցում ե ծառի փոսին: Հսկաները գոռում են: Հանկարծ ձին խրնում ե յել բռիչ զործում առաջ: Ճյուղը կոտրվում ե, մնում նազարի ձեռին: յեվ սա ձիու հետ միասին բռչում են զեպի բռնամին: Լսվում ե նազարի զոռոցը) Աման...

**ԹՇՆԱՄՈՒ ԶՈՐԲ.**—(Դրսից) Ծառը պոկեց, փախեք...

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Թշնամին փախչում ե... Հասեք...

(Հսկաները հարձակվում են բռնամու զորի վրա):

**ԶՈՐԲ.**—Աման, Քաջ Նազարն լեկավ...

**ՂՈՌՈԲՈՒԴԱՐ.**—Զարեքը: (Կոխի, զոռոց, իրաւուցում, վոր զնալով հետանում ե):

ՉԱՅՆԵՐ ԴՐՍԻՑ.—Այ ապրես, նազար, վոնց և քշում:  
— վոնց պոկեց ծառը.—Տես վոնց և ջարդում:  
— Փախան, մարդ չմնաց: (Առուրյուն):  
— Նազարին բերում են:

(Զայներ մոտենում են հետզիետե յել ռուսով ներ են զալիս  
հսկաներ ծողովրդի հետ, ձիու վրա բերելով նազարին, վոր  
սարսափից ուշագնաց և յեղել):

ԴՈՌՈԲՈՒՀԱՅ.—Ծառը ձեռիցն առեք, վեր բերեք ձիուց: Ապրի  
Դադարը:

(Նազարին վայր են բերում ձիուց յել առնում ձեռքի ճյուղը :

ԴՈՌՈԲՈՒՀԱՅ. Խալիներ բերեք, բարձերը շարեք:  
Նազար-իշխանը թող հանգստանա:  
Գնացեք դաշտից ավարը բերեք:

ՏԵՐՏԵՐ.—(Ամրոցից դուրս գալով) Մատաղների լել պղինձը դրեք:  
ՎԱՐԺԱՊԵՏ. — Ազգալին ճաշի սուփրան բաց արեք:

ՉԱՅՆԵՐ.—Փախած թշնամուց դեսպան և յեկել:

ԴՈՌՈԲՈՒՀԱՅ.—Համմմմ...

Նեղն և ընկել,  
Կանչեք, տեսնենք,  
Վիզը պոկենք:

(Դեսպանին ներս են բերում):

ԴԵՍՊԱՆ.—Հաղթված, ջարդված մեր քաջ զորքից,  
Ժողովրդից ու աշխարքից  
Խնդիրքով ենք յեկել ահա,  
Քաջ նազարին խնդրենք հիմա:

ԴՈՌՈԲՈՒՀԱՅ.—Համմմմ... ասա...

ԴԵՍՊԱՆ.—Մեր թագավորն սպանվեց ևս կովի մեջ: Ժողովուրդն  
ու աշխարհը մնացել և անթագավոր: Հիմի մեր ջարդված  
զորքը, վողջ աշխարհը խնդրում և Քաջ նազարին, վոր նա  
մեր աշխարքն ել միացնի ձեր աշխարքին և դառնա մեր ու  
ձեր թագավորը:

ԴՈՌՈԲՈՒՀԱՅ.—(Նազարին) Քաջ նազար, կուզես թագավոր դառ-  
նաս:

ՆԱԶԻՐ.—(Ուժի գալով, ձայնը փորն ընկած) Բերեք, կդառնամ:  
ԴՈՌՈԲՈՒՀԱՅ.—(Դեսպանին):

Գնա հայտնիր ձեր քաջ զորքին,  
Ժողովրդին ու աշխարքին,  
Վոր մեր նազար մեծամորը  
դառավ մեր ձեր թագավորը:

ԴԵՍՊԱՆ. — Յերթամ հայտնեմ մեր քաջ զորքին,  
Ժողովրդին ու աշխարհին (մեկնում է):  
ՎԱՐԺԱՊԵՏ.—Կեցեց թագավոր փրկել նազարը,  
Ջարդեց հազարը, ջարդեց հազարը:  
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ. — Կեցեց նազար թագավորը:  
(Զուռնաշիները նվազում են):

## ՎԱՐԺԱԳՈՒՅՑ

ԱՐԱՐ ԶՈՐՅՈՒՐԴ

## ՔԱԶ ՆԱԶԱՐԸ ԹԱԳԱՎՈՐ

Պալատական սրահ՝ արեվելյան վոճով զարդարված, աջակողմը՝  
թագավորական թախտ, դիմացը վարագույրով սրողած մուտք:  
Իսկ ձախակողմը՝ շուշաբանդ պատշգամ, վոր բացվում են հրա-  
պարակի վրա: Պատշգամի պատի վրա, դիմաց ու ձախ պատերի  
անկյունում դեպի դուրս ենայում մի այլ փոքրիկ պատշգամ—  
հովանիով: Թախտի մոտ պատին են կպցրած վազրի մորթին:

ՄԵՆԵԿԱՊԵՏ.—(Ներ ե զալիս յել բարեվ բոնած կանգնում վա-  
րագույրի աջակողմի: Զոր ու ցամաք, արագաւարձ, մանա-  
բայլ արարած՝ մկան աչերով: Շարժ ու ձեվերը ծիսական,  
մեխենական):

ՆԱԶԻՐ.—(Ներ մտնելով խոնարի վողունում ե Սենակապետին)  
Տեր թմ:

ՄԵՆԵԿԱՊԵՏ.—(Պարսկական վողունով) Տեր թմ:

ՆԱԶԻՐ.—(Կանգնում ե Սենեկապետի դիմացը):

ՎԵԶԻՐ.—(Ներ մտնելով Սենեկապետին ու նազիրին ջոկ-ջոկ) Տեր թմ:

ՄԵՆԵԿԱՊԵՏ. — | (Երենց հերքին) Տեր թմ:  
ՆԱԶԻՐ.— | (Երենց հերքին) Տեր թմ:

Մտնում են ապա մյուս պատուի աշխաները՝ ԶՈՐՅԱՊԵՏ, ԳԱՆԶԱ-  
ՊԵՏ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ու բոլոր նույն կարգով վողունելով  
իրար՝ կանգնում են յերկեար ու բարեվ բոնած՝ սպասում  
յերկուղածուրյամբ):

ՆԱԶԻՐ.—(Սենեկապետին) Արթնացել և Գերագույնը:

ՄԵՆԵԿԱՊԵՏ.—Յերեկոյան ընդունելով մահիմ անփուլթ ննջեց  
մինչև արշալույս, ծագեց արեգական հետ և ահա իսկույն  
կճառագե արեգնափայլ:

**ՆԱԶԻՐ.**—Անմոռաց որեր են: Ի՞նչ եր մեր պետության նավը  
մեր նախկին պարտված թագավորի որոք: Ալեկոծյալ տախ-  
տակամած:

**ՎԵԶԻՐ.**—Այս, ինչ Գերագունը հաղթեց մեր նախկին ժլատ ու  
ապիկար թագավորին՝ յս յերջանկությունից չեմ քնում:

**ՆԱԶԻՐ.**—Յես ևս չեմ քնում: Յեվ արդարեւ, նազար յերջանկիլ  
յերջանկացրեց մեր պետությունը և հիմա արժան և և իրավ,  
վոր ինքը հանգիստ առնե պահ մի:

**ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.**—Յերջանկությունը իմ ել աչքերից քունը դա-  
դարեց: Վայելում եմ հարատեւ արթնություն մի, վոր դրախ-  
տային քնի յե որինակ:

**ՆԱԶԻՐ.**—Յերջանկություն: Սա թագավոր չեր, այլ յերկնային  
մանանա: Յեվ անձկալի՛, վեց նահանգ սրա որով յս կցե-  
ցի իմ իշխանության կալվածներին:

**ՎԵԶԻՐ.**—Չորս նահանգ ել յես կցեցի:

**ԶՈՐԱՊԵՏ.**—Յես կալվածատեր դառա, վոր յերբեք չելի նախկինի  
ուրոք:

**ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.**—Հոգեոր դասն ել պարարեց որինավոր:

**ՆԱԶԻՐ.**—Միով բանիվ ամենքս լավ դրսավեցինք:

**ՎԵԶԻՐ.**—Դու սպասիր, տեր իմ, ել կգրստվենք:

**ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.**—Աստված մեծ եւ Աղաչենք մի պատերազմ ել տա:

**ՆԱԶԻՐ.**—Այս Աստվածը, վոր մինը տվեց՝ միուսն ել կտա հայ-  
րաբար:

**ԶՈՐԱՊԵՏ.**—Թագավորներս ել՝ աստծու տվածից քաջարին դուրս  
յեկալ: Սպասենք նոր հաղթանակի:

**ՆԱԶԻՐ.**—Ուրեմն, տիարք, ողնենք թագավորին իր ծանր պար-  
տականությանց մեջ:

**ԲՈԼՈՐԸ.**—Ողնենք, ողնենք:

**ՆԱԶԻՐ.**—Յեվ աստված պահե թագավորին:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—(Անհանգիս շարժ ու ձեմերով դուրս ե վազում  
յեվ ներս նայելով) Գերագունը...

**ԲՈԼՈՐԸ.**—(Յերկրագում են յեվ մնում յերեսները գետնին):

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—(Ներս վազելով ու դողդով ձեռներով վարագույրը  
բաց անելով) Ահեվ կացցուք: (Ներս ե մնում ՆԱԶԱՐԸ՝  
բարակոր, յեվ շատ հպատակ զիների վրայից անցնելով՝ առա-  
ջանում ե դեպի բախտը յեվ կանգնում ե նրա մոտ՝ յեւեր  
դեպի պարատականները: Նրա յետելից՝ նույնպես պարատա-  
կանների զինի վրայից անցնելով՝ զայիս ե ՍՍ.Ք.ԸՆ, նոր զգես-  
տերով ու դրույթով ձեռին, կանգնում ե նրա յետելի)

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—Յերջանիկ ընդունելու թյունը նազար արդարականը:

Որ յերեսներորդ: Յերկյուղածությամբ առաջ մատիք:  
Աստված պահե թագավորին:

**ԲՈԼՈՐԸ.**—(Կիսաբոյն կանգնում են նազարի առաջ յեվ խոնարհ  
յերկրագում) Ամեն: (Մնում են յերեսները գետնին):

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—(Սուաջ ե գալիս յեվ վոլորած բուդր բանալով՝  
զլուխ ե տախիս նազարին յեվ սկսում կարդա) Թագավորը  
քաջ, արեգակն արդարության, ծավ խելաց, կարողության  
բազուկ, բերան ճշմարտության, համարձակվում եմ կար-  
դալ այսորվան փերմանը, վոր գիշերս հրամայեցիր ամորվան  
որվան, վոր և ահավասիկ ահա. —«Յես, նազար հազարե-  
րորդ, անհասանելի կամոքն աստծո թագավոր և կրոնապետ  
նազարստանի, Տիտանստանի, Գոզա և Մազոգա, Աճուճա  
և Պաճուճա և ալն, և ալն, և ալն: Տեր աշխարհի, հաղ-  
թող ամենից և ամենայնի, ահավասիկ հրամայեմ, կարգա-  
դրեմ, որինեմ և անորինեմ: Թող այսոր ևս արեգակը ծագե  
արեկլից և մալբամուտ ունենա արևմուտքում: Մարդիկ  
ծնվեն և մեռնեն: Յեվ ամենայն գործ մարդկային, վոր  
գործվի, թող շարունակե գործվել: Վորով թող կատարվի  
խոսքն աստծո և որինքը մարդկային, թե թագավորք  
հրամայեն և աշխարհ գտննա»: Ստորագրված ե՝ «Նազար  
հազարերորդ: Ընդ իսկականին ճիշտ ե՝ քարտուղար քար-  
տուղարաց՝ Բաղախորիկ»:

**ՆԱԶԱՐ.**—(Գետով նեան ե անում թէ նավան ե):

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—Հսմարձակում եմ բարձրացնել աչքս դեպի յեր-  
կինքը յերեսնարքիդ՝ սպասելով թե ունես այլ հրաման,  
կենարոն տիեզերաց: (Լուրջուն):

**ՆԱԶԱՐ.**—(Գրանից նանելով բանալի յեվ մեկնելով Սենեկապե-  
տին): Քիշմիշ բեր:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—Քիմք նրբաճաշակության, արդիոք Հնդկամստանի  
խաղողանուշ կհաճելիր, թե Հարեցստանի:

**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ ե զուրս տալիս: Քիշմիշ բեր, վորը կլնի կլնի:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—Ստուլք հրամայեցիր, բերան ճշմարտության:  
Կոշանակե՝ յերթամ բերեմ վորեն՝ քիշմիշ:

**ՆԱԶԱՐ.**—Հա, հա, վորեն՝ քիշմիշ, հայվան, դե հայդա:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.**—(Գետուն ե):

**ՆԱԶԱՐ.**—(Ընկողմանում ե բախտի վրա յեվ աջ վնելով վերը,  
ձախը կախ ե զցում կիսուին: Համրիչը մեկնելով պալա-  
տականներին) Ե՛, դեսը մտիք: Տերությունը կարգին ե: Միա-  
լություն հո չկմ: Նազիր-Վեզիր:

ՆԱԶԻՐ. — Ամեն ինչ որինավոր ե, թագավոր իրավազոր:  
ՎԵԶԻՐ. — Վեզիր ինչ որինավոր ե, թագավոր իրավազոր:  
ՆԱԶԱՐ. — Զորապէտ, զորքը վժնց ե:  
ԶՈՐԱՊԵՏ. — Քաջ, թագավոր քաջ:  
ՆԱԶԱՐ. — Խաղնադար, խաղնան վոնց ե:  
ԳԱՆՉՈՂԵՏ. — Հաշիմսերն ստուգ են, թագավոր բազմահարուստ  
ԳԱՆՉՈՂԵՏ. — Հաշիմսերն ստուգ են, թագավոր բազմահարուստ  
ՆԱԶԱՐ. — Հիմի կերթաք ու տերութիւնը լավ մտիկ կտաք: Ամեն  
բան կարգին: Զորք ե, հաշիմ ե, հարստություն ե՝ լավ  
կպահեք, թե չե կարկածներդ կճղեմ, հարամզաղաներ: Ահա  
ինձնից հրամանք: Տերութիւն մեջ գողություն չլինի: Թա-  
լանները լավ տեղափորեք: Զգողանան: Իմացաք:  
ԲՈԼՈՐԸ. — Իմացանք, տեր արքա:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս զարով) Փոթորիկ բարկութիւն, նոր իշխան-  
սերն ակնկալում են ունկնդրութիւնդ:  
ՆԱԶԱՐ. — Հը:  
ՆԱԶԻՐ. — Սարսադաշնցի թամադա իշխանը և Ղոռորուղա Բդեշ-  
իր իր խմբով:  
ՆԱԶԱՐ. — Ե՛, վերջուն...  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Ասել կուզե՝ իշխանն Սենեկապետ ցանցարաշեն-  
ցի, այլ և Խոզերինչն և Վարազենի և համհարզ նորին:  
ՆԱԶԱՐ. — (Անհանգիս շարժումով) Ովքեր են, ջանը՝, ասա մի  
ներս գան:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս ե նրավիրում թամադային, Ղոռորուղային  
և մյուս հսկաներին, բոլորն ել իշխանական նոր զգես-  
տերով):  
ՆԱԶԱՐ. — (Նրանց տեսնելով) Բա, թամադան ե, Ղոռորուղան, ելի՞ւ  
եղափես ասեք: (Նրանց) Հը՝ ինկամք:  
ԹԱՐԱԴԱՒՅ. — Յեկանք, թագավորն ապրած կենա:  
ՆԱԶԱՐ. — Լավ եք:  
ԹԱՐԱԴԱՒՅ. — Փառք աստուծո, լավ ենք, թագավորն ապրած կենա:  
ՆԱԶԱՐ. — Բոլոր սարսադաշնցիներիդ և հսկաներիդ մի մի յերկրի  
իշխան կարգեցի: Հող ու ժողովուրդ ստացաք:  
ԲՈԼՈՐԸ. — Ստացանք, թագավորն ապրած կենա:  
ՆԱԶԱՐ. — Հիմի ինձնանից հրամանք: Բոլոր սարսադաշնցիք  
ու հսկաներդ պիտի ապրեք պալատիս մեջ, զոլամ պիտի  
դառնաք. անձս պիտի պահեք: Զեր հողերը կտաք կառա-  
գաթի: Ժողովուրդը կաշխատի՝ զուք կուտեք: Յեկ հրաման  
չե, զոր գուք աշխատեք: Հիմի ամենքդ աղնիվ եք: Իմացաք:  
ԹԱՐԱԴԱՒՅ. — Իմացանք, թագավորն ապրած կենա:

ՆԱԶԱՐ. — Ղոռորուղա, իմացաք:  
ՂՈՐՈԲՈՒՀԱՊ. — Իմացա, համմմ... թագավոր:  
ՆԱԶԱՐ. — Կամաց: Ձենդ քաղաքավարի հանի: Պալատ ե, ախոռ  
չե: Հայվան. (Ամենին) Դե, հիմի ուղարք: (Սաբոյին)  
Իշխան Սաքու, գրոշակը թող:  
ՍԱՔՈՆ. — (Դրուակը տեսնում է բախտի ծայրին):  
ՊԱԼԱՏԿԱՆՆԵՐ. — (Խոնարհ գուլի են տալիս ու հեռանում. ՍԱՔՈՆ  
հետեւկում ե նրանց: ՍԵՆԵԿԱՊԵՏԸ հետեւկում ե սրան):  
ՆԱԶԱՐ. — (Լուս ընկողմանելով բախտի վիա) Ուխիխանչ... եսո՞վ...  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս է մտնում մի ՄԱՆԿԱՌՎԻԿԻ նես, վոր ձեռին  
մատուցարան ունի՝ վրան հիւմիւ: Սենեկապետը նշան  
մանկավիկին, վոր հրամցնի բազավորին: Մանկավիկը զանա-  
զան ձեվեր ե անում, ապա աջ ծոնկը գետենի դեմով յեվ  
բարձրացնելով՝ մոտենում է Նազարին յեւ հրամցնում հիւմիւ):  
ՆԱԶԱՐ. — (Ապտակելով մանկավիկին) Ի՞նչ ես ծոմովում մեխմունի  
պես: Քիշմիշը բեր, ելի՞:  
ՄԱՆԿԱՎԻԿ. — (Բիւմիւը դնում է Նազարի բախտին):  
ՆԱԶԱՐ. — Ռազմ յոզիր:  
ՄԱՆԿԱՎԻԿ. — (Հեռանում է զանազան ձեվերով):  
ՆԱԶԱՐ. — (Սենեկապետին) Դու ինչ տնկվեցիր իշի պես:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Պատկեր գեղեցկութիւն, յերեսնարքդ այսոր գեռ  
լվացվումն և ոծումն չի ընդունել արքայաբար:  
ՆԱԶԱՐ. — Ի՞նչ:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Սրգուք վարդաջրով հաճիլի կինի թարմացնել  
յերեսնարքդ, Սավեր արեգական, թե՝ այլ բուրալից թարմա-  
շունչերով:  
ՆԱԶԱՐ. — Զհասկացանք:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Զինն մաքրութիւն, այսոր դեռ չես լվացվել:  
ՆԱԶԱՐ. — Ի՞նչ նորս ցանք ե եղ ամեն որ լվացվելը: Ծովաքան  
եմ, թե լվացքի տաշու: Զի՞ լինի վոր լվացվեմ:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Կարգ ե թագավորաց, Գանձարան որինապահու-  
թիւն:  
ՆԱԶԱՐ. — Իշի կարգ: Ամեն որ լվացվի, հա լվացվի:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Կարգեածելի՞ր անցնել լոգարանի ոթիակը, Զայն  
ավետյաց:  
ՆԱԶԱՐ. — Ի՞նչ, բաղնիս:  
ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Այս, տեր իմ, բաղնիս:  
ՆԱԶԱՐ. — Յերեսուրբիչը թրջի, բեր, թող վերջանա զնա: Ո՞վ  
գրուխ ունի տեղից վեր կենալու:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Խոր զլուխ տալով) Կատարող եմ ձեր բոլոր հրա-  
մանաց: Ել գոչինչ չժ՞ս որինում, Գրիչ յերկնային:

ՆԱԶԱՐ. — Դե, ել ձերեք ե: Յալլա: (Քացի յե տալիս):

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Գլուխ ե տալիս յեվ հեռանում):

ՆԱԶԱՐ. — Բաղնիս: Իշխ թոռ, պապս բաղնիսում մեռավ, այ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Մտնում ե յերկու ՄԱՆԿԱՎՀԻԿԻ հետ, վորոնցից մինը բերում ե անուշահոտ ջրեր, իսկ մյուսը թեմին գցած յերեսարդ-  
բիշներ, դենջակ յեվ սփածանելի: Նրանք Սենեկապետի ցույց  
սված ձեվերով նախ բաց յերեսարդիչով սրբում են նազարի  
յերեսը, ապա յեվ ոճելով նրան՝ լաբեր փաքարում են մեջ-  
ին, Սենեկապետի ցուցմունիով):

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ցույց ե տալիս) Ոծեցէք նախ քիթը արեգակնային  
գեղեցկության: Ազգպետ: Սփանձանալի հրամցրեք: Ազգպետ:  
Հիմա լոթն կաթիլ նսդկական վարդեջուր կաթեցրեք դնչին  
շնորհաց աղբյուրի: Ազգպետ: Ղենջակ: Յերեք կաթիլ արա-  
բական ստաշխենի սքանչելաց ծոծրակին: Այդպետ: Ղեն-  
ջակ: Ամենայն զգուշությամբ և յերկուղածությամբ յերեք  
անգամ յերեք կաթիլ Շիրազի վարդեջուր՝ ամպաշուր հոն-  
քերին և ընչացքներին: Ազգպետ: Ղենջակ:

ՆԱԶԱՐ. — (Ծամածուելով դեմքը յեվ աշերը նպնպացնելով) Կացիք,  
կացիք, հայվաններ, աչքերս լցվեցին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Դադար պահ մի:

ՆԱԶԱՐ. — (Հոտսելով ոդի մեջ) Հըմ... լավ հոտ ունի անիծածը:  
Ապա մի են թասի մեջ մի քիչ ածեք բերեք: (Բերում են:  
Խմելով) Լավն ե: Բա... զուր տեղը ինչի՞ յեք փչացնում: Ել  
չփչացնեք: Հարկավոր չե: Ամեն որ բերեք, յես կխմեն:  
Հիմի յալլա:

ՄԱՆԿԱՎՀԻԿՆԵՐ. — (Հավաքում են շիւերն ու սրբիները յեվ գնում:  
Սենեկապետը նետելում ե նրանց):

ՆԱԶԱՐ. — (Թրկն ե տալիս ու քիւմիք ուտելով, սկսում ե յերգել:  
Նրան ձայնակցում ե Սահոն) Աման եք, այ ջան, ջան, ջան, եք  
աման, աման:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Խերս մտնելով) Ունկն վողորմածության: Մի  
գեղջուկ կին ե յեկել և հրամանոցդ տեսությունն ե խնդրում:

ՆԱԶԱՐ. — Հա, հետո: Իշխ թոռ

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Մի գեղջուկ կին ե յեկել, կհաճիս արժանացնել  
իրեն արեգնատեսիլ յերեսհարքի:

ՆԱԶԱՐ. — Չեմ հասկանում ինչ ես ասում, մենակ գնտ ասու  
(յերգելով) Համ...

ՄԱՔՈ. — (Յերգում ե) «Գնա ասա համ»...

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Գնում ե):

ՈՒՍՏԻԱՆ. — (Ներս ե մտնում յեվ կանգնում ժեմմին):

ՆԱԶԱՐ. — (Չի նկատում երան, շարունակում ե յերգել):

ՈՒՍՏԻԱՆ. — (Մի բայլ առաջ ե զալիս):

ՆԱԶԱՐ. — (Նայելով նրա կողմը) Հը, սվ ե:

ՈՒՍՏԻԱՆ. — (Առաջ գալով): Չես ել ուզում չանանչես: Յես եմ,  
Ուստիանը:

ՆԱԶԱՐ. — Փիե... Աղջի Ուստիան, գու յես: Արի, արի:

ՈՒՍՏԻԱՆ. — Վայ: Ես դրսւստ ե: Ես ինչ բան ե: Յերազ և  
ե զալիս յեվ զարմացած նայում նազարին) Ես ինչ բանի յես,  
այ մարդ:

ՆԱԶԱՐ. — Տեսնում ես, ելի: Աշխարքը բռանս միջին:

ՈՒՍՏԻԱՆ. — (Տարակուսելով) Վայ, ինձ ասում ելին, չելի հավա-  
տում: Յանի ես դրսւստ ե:

ՆԱԶԱՐ. — Դրսւստ ե, Ուստիան խանում դրսւստ ե: Ասում ելիր  
թե ինձնից բան չի գուրս զա: Տեսար: Ասում, ելիր թե վախ-  
կոտ եմ: Տեսար: Հիմի սվ ե ինձնից քաջ, սվ ե ինձնից  
խելոք, ինձնից հարուստ: Հա: Դու գիտես թե տերություն-  
ներ են ինձնից գողում: Գիտես թե տերությանս սահման-  
ները վոր աշխարքի ծերերն են: Դուռը վրաս կփակիս: Դե  
գնա, հիմի, թագավոր եմ: Կերպը:

ՈՒՍՏԻԱՆ. — (Աչի տափով նայում ե նրան):

ՆԱԶԱՐ. — Լավ մտիկ տուր: Տեսածիդ հավատում ես: Թագա-  
վոր եմ:

ՈՒՍՏԻԱՆ. — Ի՞նչ ասեմ, դրսւստ ե, թագավոր ես:

ՆԱԶԱՐ. — Հար-բա... թագավոր եմ ու աշխարք եմ գողացնում:  
Հիմի ի՞նչ կասես քո խելրին:

ՈՒՍՏԻԱՆ. — Ի՞նչ պիտի ասեմ:

ՆԱԶԱՐ. — Չե, ասա, ելի, խելքդ խելք եր:

ՈՒՍՏԻԱՆ. — Ի՞նչ ասեմ: Մինչե հիմի ունեցած խելքովս եսպես  
չպիտի լիներ: Հիմի յերեռում ե, վոր իմ խելքը դրսւստ խելք  
չեր ինզեր:

ՆԱԶԱՐ. — Հա, եղպես: Դե հիմի արի ձեռս պաչ արա ու դառի  
թագավորի թագուհի:

ՈՒՍՏԻԱՆ. — Բա, բա... արեկիդ մատաղ, դրսւստ (Համբարում ե  
նազարի ձեռը) Վայ, խելքս կկորցնեմ. յես թագուհի յեմ:

ՆԱԶԱՐ. — Դե հիմի շորերդ փոխի ու խելքդ ել հետը, են հիմ  
խելք եր: (Դեպի դորս) Ե՛, տա, Սենեկապետ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս ե մտնում):

ՆԱԶԱՐ. — Ուստիան խանումի համար հին թագուհու շորերից մե-  
լավ ձեռք հանել կտաս վերի ամբարիցը: Իմացար:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — Խոնարհաբար իմացա, Շեփոր հրամանի: Միայն, Յերկինք մտածության, զգեստը իբրև ոծյալիք, թէ հարճի համար լինի:

**ՆԱՌԱՐ** — Մատ արի: (Սենեկապետը մոտենում է, ծոծրակին բորելով) Հը... լեզվիդ տուր, լեզվիդ տուր: Ելո՞ւ եդ լեզուն: (Մի համ բացի տարով դե, հայդե:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — (Գնում է յեվ յես գալիս) Առաքեցի պատվերն առ պատկանելուն, Անձրե՛ կենաց, և ճեպական արագությամբ կէղի զգեստը:

**ՆԱՌԱՐ.** — Լավ: Սամուր քուրքս բեր գցի վրաս ու գնա Ռւստիան խանումի համար չարազ բեր, մինչև շորերը պատրաստեն: Են վոսկե սինիով բեր, թող տեսնի: (Սենեկապետը դուրս է գնում յեվ ներս և մտնում մանկավիկների հետ, վորբերում են Նազարի ծիրանին յեվ միաժամանակ վոսկի մատոցարան՝ վրան զանազան բաղցրավենիներ յեվ չոր մրգեղին: Սենեկապետի ցուցմունենով, մանկավիկները հազցնում են Նազարին յեվ ապա մատոցարանը դնում Ռւստիանի տոջեվ, վորպուղական կենօ նման խունջիկ-մունջիկ անելով վերցնում է): Հիմի յել գնա վոսկի թագս բեր (Սենեկապետը դնում է: Նազարը ձգվում է բախտի վրա) Ոխմայ... երժ... այ տղա, ինչ լավ բան է թագավորությունը: Ափսոս չե: Ի՞նչ ելի անխելքացել, ենքան ժամանակ մնացել գեղում վեր ընկած: Մատու մատիս չեմ կպցնում: Կեր, խմի, քնի, վեր կաց, գնա բաղչում ման արի, յեկ ճաշդ անուշ արա, հետո թինկը տուր բարձին ու նարգիլե քաշի (Յերգում է) Աման, աման, այ ջան:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — (Յերգում է բազր յեվ գարձյալ նույն ձեվերով դնում է Նազարի գլխին, վորը դեռ յերգում է):

**ՆԱՌԱՐ.** — Մի սիմի, հայվան: (Ռւստիանին) Հա, առավոտից, ախպեր ջան, նստում եմ թախտը ու հրամայում եմ մինչև ճաշ: Հետո բերում են ճաշը, ու աչքը բարին տեսնի՝ դնում են առջեղ լավ յեղը, մեղրը, կարագը, գաթան, գսուան փլավը: Անուշ արա:

**ՌԻՍՏԻԱՆ.** — Յես ելի, վոր չորթան ել չունելի տանը:

**ՆԱՌԱՐ.** — Պալատս, ախպորս ասեմ՝ հարստության ծով ե: Հարուր ու հինգ հազար ծալք տեղաշոր, լավ դութնի յորդանդոշակ մենակ ես վերի քոշկում կա: (Սենեկապետին) Գյաղաղա, աշխարհը բեր, բռնի:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — (Գնում է):

**ՌԻՍՏԻԱՆ.** — Վահա, ի՞նչ լավ ե: Ասել ե մեզ համար լավ կապը ենք հիմի:

**ՆԱՌԱՐ.** — Կապը ենք... քեփ կքաշենք, ասա: (Յերգում է կարճ) Աման-աման այ ջաշաշան:

**ՌԻՍՏԻԱՆ.** — Կապը ենք ու սրանից զենը ել իրար դիպչողական խոսք չեն ասիլ: Մարդ ու կնիկ ենք՝ ի՞նչ ունենք բաժանելու: Եսոր-հսոր գու թագավոր ես, իսո՞ւ թագուհի: Մեր համար հիմի սաղական չե հասարակի պես ժաժ գալը, կովելը, յես ի՞նչ իմանամ:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — (Յերգում է աշխարհագունդը մանկավիկի ձեռքով, մատուցանում է նազարին յեվ դուրս յելնում):

**ՆԱՌԱՐ.** — Լավ կյանքի մեջ ընկա, Ռւստիան, լավ, ափսոս առաջ եր յեղել: Ասում ես յերազ ե, ելի՛, ես ամենը: (Գյաղի դուրս) Եւ, գյաղա, սենեկապետ: (Սենեկապետը ներս է գալիս) Մատ արի: (Յերեկի ապակի է տալիս նրան) Հը...

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — Ի՞նչ կհրամայիս, տեր իմ:

**ՆԱՌԱՐ.** — (Քրից բռնում բափ է տալիս) Հը... (Սպասում է) Ցալեց:

**ՍԵՆԵԿԱՂԵԾ.** — Ցալեց, տեր իմ:

**ՆԱՌԱՐ.** — (Բռնում է Սենեկապետի ականջը: Ռւստիանին) Ահան հիմի տես: (Հուպ է տալիս ականջը: ՍԵՆԵԿԱՂԵԾը աշխատում է դեմքի կծկումները զավել յեվ կուչ ու ձիգ է գալիս՝ նստելով ու վեր կենալով) Ես յերազ ե: (Սենեկապետին) Խաղ յեղի: (Սենեկապետը դնում է): Զե, ջանըմ, քեփիդ նայիր, յերազ չա, բոլորը ճիշտ ե: (Յերգում է) Աման, աման, այ ջանան: (Իրան դրսելով) Երփ... (Զանձրույր զգալով) Են, հիմի ի՞նչ անենք: Հա: (Գյաղի դուրս) Նազիր-վեղիր:

**ՆԱՌԻՐ.** — | (Ներս ընկնելով յեվ դռան մեջ իրար դիպչելով) Վեշիր-վեր: | Հրամայի՛, թագավորն ապրած կենա:

**ՆԱՌԱՐ.** — (Գյաղի դուրս) Զորավար, խազնադար:

**ԶՈՐԱՎԱՐ.** — | (Ներս ընկնելով) Հրամայի՛, թագավորն ապրած գԱՆՉԱՂԵԾ. — | Կենա: (Լուրջուն):

**ՆԱՌԻՐ.** — Ի՞նչ կհրամայիս, տեր:

**ՆԱՌԱՐ.** — Ի՞նչ կհրամայի՞մ: (Հաս-հաս արտասանելով) Վոչինչ չեմ հրամայում, գնացեք:

**ԲՈԼԱՐԸՐ.** — (Գնում էն):

**ՌԻՍՏԻԱՆ.** — Ի՞նչի կանչեցիր:

**ՆԱՌԱՐ.** — Վոչինչ, հենց ենակես, քեփի համար: (Ծիրանին դրսելով յեվ իրան ըրկուսելով) Երփ, տեսնում ես, Ռւստիան, վոնց

են հոլի պես պտտվում չորս կողմաս: (Ուստիանի ուսելք դիտելով) Հա՞վ անուշ արա, Ուստիան, շատ կա, վախիլ մի: Միքիչ ել ջերդ ածա: բաղչում չարազ կանես, լա՞վ Բաղդագու խուրմա կա մեջը:

ՈՒՍՏԻԱՆ.—Ե, ասել ե, ել առւն չենք գնա:

ՆԱԶԱՐ.—Տնւն: Ի՞նչ հորս ցավս ևս թողել տանը: Տունը պըծա՛վ: Հա՞յ գիտի տուն: Ցերազը նա յեր: Խոկը վոր յերազ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Ներս մտնելով նամիտների ներ Ուստիանի զգեստներով): Յեթե թագուհին կրաքիաճի զգեստավորվել նաժիշտները պատրաստ են:

ՆԱԶԱՐ.—(Տնազելով նրան յեվ ծամածնելով) ԲԵ, բԵ, բԵ, բԵ, բԵ... ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Ուրեմն ի՞նչ կհրամայիս կորդալլության մասին, Որենոդիր շնորհաց:

ՆԱԶԱՐ.—(Լեզու հանելով յեվ ծամածնելով) ԲԵ, բԵ, բԵ, բԵ, բԵ... լեզվիդ տուր, լեզվիդ տուր... ի՞նչ ես ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Թագուհու շորելը պատրաստ են, տեր:

ՆԱԶԱՐ.—ԴԵ, եղան ասա, իշի կտոր: (Ուստիանին) Դու շորերդ հագի՝ յես ել մի բարձրանամ այվանը, աչք ածեմ տերության, տեսնեմ ամեն բան կարգին ե, վոր կողմանես՝ իմաց արա, գնանք բաղչա: (դեպի դուրս) Խշան Սաքո, դրոշակն առ: (Սահոն բոնում ե դրուակը) Զարագար, խազնադար:

ԶԱՔԱԴԱՐ. — } (Ներս ընկելով) Հրամայի, թագավորն ապրած ԽԱԶՆԱԴԱՐ. — } կենա:

ՆԱԶԱՐ.—Առաջ ընկեր, գնանք տեսնենք տերության գործերը ի՞նչ հալի յեն: (Զարագարն ու Խազնադարը մեջները կուացած՝ առաջ են ընկենում: Նազարը հետելում է նրանց յեվ դուրս յելնելով դիմաց դուից՝ բարձրանում է ներսից յերեվացող պատշաճը յեվ սկսում է դիմել իր ուրցը: Սահոն նրա մոտ բոնում ե դրուակը: Իսկ Զարագարն ու Խազնադարը ծածկում են պատի այն կողմք):

ՈՒՍՏԻԱՆ.—(Վեր ե կենում վոր զնա, բայց մի բան մտաբերով կանգ ե առնեում յեվ խոսելով անզույց) Ի՞նչ եմ ասում, գլադա, լսում ես:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Գերապատիկ ալո՛: Արթուն ե ականջս լսելու դույզն հրամանիդ:

ՈՒՍՏԻԱՆ.—Չես իմանում վոնց դառավ թագավոր: Ախր Նազարս տանը միքիչ վախկոտ եր:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Սարսափից մադալով) Ականջս չի լսում, համեստափայլ թագուհի:

ՈՒՍՏԻԱՆ.—(Բարձր) Ասում եմ՝ ես մարդս առաջ վախկոտ եր, վոնց դառավ թագավոր: Ելի՞ չլսեցիր: ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Կրկին չլսեցիր, լուսեղին, խնայիր, յես այստեղ չեմ... յես չկամ...

ՈՒՍՏԻԱՆ.—(Նարմինով դեպի դուրս) Գլուխս մեռնի թե բան եմ հասկանում: (Սենեկապետին) Ե՞ս դռնով պիտի զնանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Գերաճշմարիտ ալո՛, ալո՛ դռնով, յերանություն տիեզերաց:

ՈՒՍՏԻԱՆ.—Վոր ասում եմ՝ յերա՛զ ե: (Դուրս ե զնում, Սենեկապետը հետելում է նրան):

ՆԱԶԱՐ.—(Այգանից դեպի դուրս) Ել, Ել, Ել, Ել, եղ ով ե եղ գլադան: Խարջը չի բերել, ձիարեն ե տանում տռւն: Տվեք դրա կարկածին: Տվեք եղ հառամդղադին, ես ե, վեր յեկա, համամ...

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Վերադառնալով չղջիկի պես կծկում ե վարագույրի մոտ յեվ սպասում: Ներս են մտնում նազիր—Վեզիր ապս յեվ հետզետե զորագարներ յեվ ալ պալատականներ):

ՆԱԶԻՐ.—(Սենեկապետին զլուխ տալով) Տեր ի՞մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Գլուխ տալով) Տեր ի՞մ: (Վեզիրը յեվ մյուսները գլուխ տալով Սենեկապետին նոյն խոսին են փոխանակում):

ՆԱԶԻՐ.—(Սենեկապետին) Ո՞ւր ե Գերագույնը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Հաճեց ամբառնալու պատշաճութե՛ պետության անձամբ շրջահայելու:

ՆԱԶԻՐ.—(Զգույց) Պատերազմի շշուկներ դեռ չկան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Տակավին վոչ:

ՆԱԶԻՐ.—Ի՞նչ ե ասել Գերագույնը նորափթիթ մեր թագուհու հետ անուշը վայելելու ժամին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—Առանձնապես վզչինչ: Այդ յերեկ եր, յերբ մի փլազի հատիկ ընկապ Գերագույնի քիթը: Այդ ժամանտկ աստվածայինը փողշաց և բարձրանեց հրամայել, վոր խոհարարին զլխատեն: Հրամանը կատարվեց: Յեվ անգա թագավորն ապառնաց. «պիտք ե ջնջել խոհարարներին»:

ՆԱԶԻՐ.—Ուրեմն, տիմրք, պարապ չմնանք: Գնանք ոգնելու մեր թագավորին իր ծանր պարտականությունների մեջ: Բարձրանանք պատշաճութե՛ գիտենք պատությունը:

ԲՈՂՈՐԾ.—Գնանք: (Դառնում են դեպի Սենեկապետը յեվ զլուխ տալով) Տեր ի՞մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.—(Նրանց զլուխ տալով) Տեր ի՞մ: (Հեռանում են յեվ ծածկում պատի յետելով):

**ՄԵՆԿԱՊԵՏ.**—(Դուրս է զնում յեվ խկույն վերադառնալով՝ յես է անում դուս վարագույրը: Ներս է մտնում Ռւսիանք բազուհու զգեստներով յեվ ծանր ու բարակ, լուրջ, զայխ նսում է թախտի վրա: Սենեկապետը կծկում է վարագույրի մոտ: Դուրսը անորոշ աղմուկ է լսում: Սենեկապետն ուսապում է այն կողմքի: **ՄՈՒՆԵՏԻԿԻ ԶԱՅՆԸ.**—Ահազանգ, զարթիք, կոչնա՞կ... (Լավում է փողերի ձայնի):

**ՆԱԶԱՐ.**—(Ներս է վազում, Սահնի նրա յետելից) Գյաղա, ես ի՞նչ եմ: Ա՛ կնիկ, ես ի՞նչ բան եմ:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Չեմ իմանում:

**ՆԱԶԱՐ.**—(Սահնին) Մի տես ի՞նչ յեղավ:

**ԱԱՔՈ.**—(Վախենալով մտնենում է վարագույրին յեվ հանկարծ դուրս գնալով՝ կծկում է վարագույրի յետելի, այնպես վոր յերեվում ե նրա այնուն լինելը):

**ՄԵՆԿԱՊԵՏ.**—(Ներս վազելով) Բազուկ հաղթության, սուրճ հանդակի:

**ԱԱՔՈ.**—(Ներս է վազում նրա յետելից) Ղիամաթ ե:

**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ ղիամաթ:

**ՄԵՆԿԱՊԵՏ.**—Ուզում ե տսեկ՝ ալլայլումն:

**ՆԱԶԱՐ.**—Գնացեք. կարգին բան իմացեք: (Սահնի յեվ Սենեկապետը դուրս են զնում, ներս են վազում նազիր—Վեզիր, զորավար յեվ այլ պալատականներ) Ի՞նչ կա, ի՞նչ զալմադալ ե:

**ՆԱԶԻՐ.**—Թագավոր քաջ, սուրճանդակ յեկավ և հայտնեց՝ վոր թշնամի թագավորները՝ թվով տասն, խախտելով ուխտը հարկանության՝ զորք են կապէլ և հարավից, հցուսիսից, արևելքից և արևմուտքից առաջեն խաղում մեր յերկրի վրա:

**ՆԱԶԱՐ.**—Ե՛ թագավոր յեղանք՝ պրծանք: Ել ի՞նչ են ուզում: Նոր բան կմ:

**ՆԱԶԻՐ.**—Ուզում են մեր տերությունն ու թագը խլել:

**ՆԱԶԱՐ.**—Թագը խլեն: Վ՞նց թե... (Հանելով բազր յեվ տալով Սենեկապետին) Գյաղա, տար պահի: Շանց կտամ դրանց թագը: (Սենեկապետը առնում է բազրը յեվ տանում):

**ԶՈՐԱՎԱՐ.**—Թագավոր քաջ: Արդուք զորք կապէնք, թե դարձալ դու մենակ անձնական զորությամբդ կիսորտակես հանդուզն թշնամուն: Ի՞նչպես կհրամակես:

**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ պիտի հրամայեմ: Գնացեք կովեցեք:

**ԶՈՐԱՎԱՐ.**—Ի՞նչպես, մենք կովենք, թագավոր քաջ:

**ՆԱԶԱՐ.**—Բա ի՞նչ, ի՞ս պիտի կովեմ:

**ԶՈՐԱՎԱՐ.**—Թագավոր քաջ: Յես ուզում եմ տսեկ, վոր դու կառաջնորդես՝ և զորքը յետեկից կզա:

**ՆԱԶԱՐ.**—(Նվազնելով) Շնչուք... պրծանք: Ել նազարը կոիկ չէ գնա: Վ՞նց վոր կու զեղք՝ արեք:

**ԶՈՐԱՎԱՐ.**—Քաջ հրամայեցիր, թագավոր քաջ: Բայց յեթե դու չգաս՝ զորքը մենակ պիտի գնա թշնամու դեմ:

**ՆԱԶԻՐ.**—Թող մենակ գնա: Ամեն անգամ յիս պիտի գնամ:

**ՆԱԶԻՐ.**—Թագավորն ապրած կենա: Այսուեկ մի գժվարություն կա:

**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ դժվարություն:

**ՆԱԶԱՐ.**—Զորք շատ կջարդվի:

**ՆԱԶԱՐ.**—Զարդվում ե՝ ջարդվի. շատ վեճս ե:

**ՆԱԶԻՐ.**—(Ուրախացած) Ո՞հ, թուլ ես տալիս...

**ՔՈՂՈՐԾ.**—(Սասիկ ուրախացած) Յերջանիկ բան յեղակ:

**ՆԱԶԻՐ.**—Ալուգես՝ առնվազը քառասուն հազար մարդ կջարդվի:

**ՆԱԶԱՐ.**—Բառասուն հազար: Լավ, մեր աշխարքում ի՞նչքան մարդ կա՝ թե վոր եղքանը ջարդվի:

**ՎԵԶԻՐ.**—(Թղրակալը բանալով յեվ նայելով) Ուղիղ հարյուր հազար բյուր և հազար իննը հարյուր հինգ մարդ:

**ՆԱԶԱՐ.**—Վոր եղագես ե՝ ջարդվի թող: Գնացեք ասեք թող կովեն:

**ՔՈՂՈՐԾ.**—(Սասիկ ուրախ) Աստված պահի թագավորին: (Գլուխ են տալիս յեվ նեռանում, Դուրսը լսվում են փողերի ձայներ, ուզնական ուխնիդ, աղմուկ, կեցցեներ, մասնետիկի ձայնի՝ «Պատերազմ»... յեվ այն, վոր հետքետք դադարում ե):

**ՆԱԶԱՐ.**—Հա, թագավորական պարտքս կատարեցի: Հիմի թող նրանք կովեն, մենք մեր քեփին նայենք: (Ուսպի դուրս) Ե՞ւ գլագաւ: (Սենեկապետը ներս է գալիս) Գնա թազս բեր, մի քիչ ել չարազ բեր: (Սենեկապետը զնում ե: Թիկն է տալիս քիչ ել չարազ բերին) Եռփ... (Յերգում ե) Աման, աման... այ ջամանն... Հ՞ը, Ուստիան, թագունի դառար. Հիմի ո՞վ դիմնա քեզ: (Գլուխը նաևն) Հ ը, չես խոսում, վ՞նց ե քո բանը, քեփդ լավացավ: Տեսմոր ուր հասար:

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Նաև լուրջ) Գանգատ չունեմ աստծուց: Իմ քեփ խուզա հոր սրտով յեղավ: Ցեղերս ազնիվ եր. հալրաթ վոր...

**ՆԱԶԱՐ.**—Ելի ազնիվ ցեղդ մելդան բերիր, այ կնիկ:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Լսիր, Բնչ եմ ասում, այ մարդ: Մի ուզում եմ իմանամ թե ես վ՞նց դառար թագավոր:

**ՆԱԶԱՐ.**—Աստծո կամքով: Թագավորական ֆերմանի մեջ եղակս ել գրած ե, «ան-հա-սանելի կամոքն աստուծու»:

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Յերեսը խաչակնելով) Հալրաթ վոր... մեռնեմ նրա զորությանը:

**ՄԵՆԿԱՊԵՏ.**—(Մանկալավիկների ձեռքով մրգեր ե բերում յեվ հրամցնել է տալիս նազարին յեվ նւսիանին, ապա մանկալավիկների ներս նեռանում):

ՆԱԶԱՐ.—(Մի իիչ նեղացած) Ե՛, ի՞նչ շատ ես հենց մի գլուխ:  
«վ՞նց յեղավ, վ՞նց յեղավ»: Ախր ի՞նչ «վ՞նց յեղավ»:  
ՈՒՍՏԻԱՆ.—Մի տեղովը դրուստ չափը, այ մարդ, թե ես վ՞նց  
յեղավ:

ՆԱԶԱՐ.—Ե՛, ի՞նչ ես շատ հենց մի գլուխ՝ վոնց յեղավ, վոնց  
յեղավ: Հասանք, ելի...  
ՈՒՍՏԻԱՆ.—Կռվի-բանի մեջ յեղար:

ՆԱԶԱՐ.—(Նվազնելով) Շհկուֆ՝... են ել վոնց...  
ՈՒՍՏԻԱՆ.—Նեղ տեղեր շատ ընկար:

ՆԱԶԱՐ.—Նեղ տեղեր... Ասեղի ծակեր անցանք ու մազե կա-  
մուրջներ վոր... Հանաք բան գիտեմ: Կորիլսեր յեղան, վոր  
աշխարքն ամբարի պիս գմբգմբում եր:

ՈՒՍՏԻԱՆ.—Ախր ես ամենը քաջության, խելքի բան ե ու...  
ՆԱԶԱՐ.—Հա գե, ի՞նչ խոսք: Քաջություն, խելք իրա կարգին:  
(Մածում ե) իիի ալշի, ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ  
զառաֆաթ: Բախտն ե բանը, բախտը: Բախտ ունիս: Քեփ  
արա, քոնն ե աշխարքը: Քանին կպտոի կպտոի՝ կրերի  
հարստությունը գլխիդ կածի: (Յերզում ե): Ահա տես, բախտ  
չե: Կորիվ եւ կոտորվում են ճանձի պիս: Ասող լինի՝ եդ ժւմ  
համար եք եղանակում կոտորվում: Ի հարկե նազարի համար:  
Նրանք կոտորվում են, մենք ճաշ ենք անուշ անուշ: Հիմի  
կորիվ կվերջանա: Թե կոտորվեցին՝ ինձ ի՞նչ: Թե չկոտոր-  
վեցին՝ փառք ու պատիվը ժւմ պիտի տան: Ի հարկե նա-  
զարին: Եստեղ ի՞նչ անի իմ խելքը, ի՞նչ անի քաջությունը:  
Բախտի բան ե:

ՈՒՍՏԻԱՆ.—Ասում ես բախտի բան, հը...  
ՆԱԶԱՐ.—Դրուստն ես ուղմաւ: Մի ժամանակ կար, նեղը վոր  
ընկնում եցի՝ վախենում ելի: Վերջը տեսա վոր ամեն տեղ  
ել դուրս եմ պրծնում: Հիմի ել տեսնում եմ վոր, հերն ա-  
նիծած, քեփ արա, մարդիկ ենքան սարսադ են, վոր ամեն  
տեղ ել կպրծացնեն: Սարսադ աշխարք ե, սարսադ մար-  
դիկ: Աշխարքը եսպես սարսադ ե յեկել, սարսադ ել պիտի  
դնա: (Յերզում ե) Աման, աման, այ ջամանա:

ՄՈՒՆԵՑԻԿ.—(Գրսից) Կոչնամակ: (Աղմուկ ե լսվում, վոր հետզ-  
հետե մոտենում ե):

ՆԱԶԱՐ.—(Վեր բռչելով) Գլագամ: Սենեկապիտ: (Սենեկապեր  
ներ ե վազում) Գլագա, ես ի՞նչ ե:

ՄԵՆԵԿԱՊԵՏ.—Ալլակերպում ե վիճակի, տեր իմ:

ՆԱԶԱՐ.—Ղոլաներս կանչի, ի՞նչ ես դուրս տալիս: (Սենեկապե-  
ր դուրս ե վազում յեվ իսկույն ներ գալիս թամադայի, Սա-  
բոյի, Պոռորուդայի յեվ մյուս հսկաների հետ):

ՆԱԶԱՐ.—Հա, եստեղ ի՞ք: Կանգնեցեք հսուել. տեսնենք ի՞նչ բան ե:  
ՆԱԶԻՐ.—(Ներս գալով) Կորիվը մեծացավ, արքայից արքա: Տագ-  
նապ ե, (Դուրս ե վազում):

ՆԱԶԱՐ.—(Մյուսներին) Գնացեք գուանը կանգնեցեք: (Թամադա,  
Սաբո, Պոռորուդա դուրս են յենում):

ՈՒՍՏԻԱՆ.—Ես ի՞նչ զուլում եր: Անջախ իմ թագուհի ժամանակի  
պիտի եդ շները թափկելին վրադ:

ՆԱԶԱՐ.—(Անհանգիս) Գլագամ: Ես եսպես չի լինի: (Պատրաս-  
վում ե փախչելով) Հը: (Աղմուկը մեծանում ե) Քաղաքը  
մտան: (Դես ու դեն ե ընկեռում) Վուէ, վուէ, վուէ ս-  
ՈՒՍՏԻԱՆ.—Այ մարդ, ի՞նչ յեղավ:

ՆԱԶԱՐ.—Զահրումար յեղավ—թագավորություն չեղավ, վուէ,  
վուէ, վուէ... Փոթոնա յե, տերությունը խառնվեց:

ՈՒՍՏԻԱՆ.—Հը... տերությունը... աման: (Դես ու դեն ե ընկ-  
եռում յեվ զանազան բանազին իրեր ե կոխում գրանիր: Հան-  
կարծ կանգ ե առնում յեվ ականջ դնում) Հը: (Աղմուկը մե-  
ծանում ե) Զե, մեծացավ: (Ծոցն ե դնում զանազան իրեր):

ՆԱԶԱՐ.—Վուէ, վուէ, վուէ... (Վազվում ե զանազան կողմեր),  
ՄԵՆԵԿԱՊԵՏ.—(Ներս վազելով) Ո՞ո՞... Գերագույն... ոգնության  
հասեր... (Դուրս ե վազում):

ՍԱՔԹՈ.—(Ներս ե վազում) Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՆԱԶԱՐ.—(Տեսնից փախչում ե դեպի դուրս): Բը՛, բը՛, բը՛, բը՛...

ՍԱՔԹՈ.—(Հետեղում ե նրան):

ՆԱԶԱՐ.—(Վախից գոռում ե) Եհեւ՛... (Գոռալով բարձրանում ե  
այլանի):

ԶԱՅՆԵՐ.—(Դրսից) Քաջ նազարը, Քաջ նազարը:

ԶՈՐԱՎԱՐ.—Վրա տվիքը...

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ.—Փախեք, փախեք...

ԱՌԱՆՉԻՆ ԶԱՅՆԵՐ.—Վրա տվիքը:

ՈՒՍՏԻԱՆ.—Սուրբ Մարիամ Աստվածածնա իրան եմ ապավինել,  
մեռնեմ իրան: (Յերեսը խաչակենում ե, Աղմուկը մեծանում ե):

ՆԱԶԱՐ.—(Վոր եր հասել այլանի վրա՝ արագ իջնում ե ցած  
յեվ վազում ներս... Մտնում ե գահի տակ):

ՍԱՔԹՈ.—(Վազվում ե սենյակում):

ԶԱՅՆԵՐ.—Հաղթություն:

ՆԱԶԱՐ — (Գլուխը դուրս ե հանում) ՀԸ՞ Հաղթել են: Գյաղմ, ով  
և հաղթել: (Դուռը բաղխում են):

ՆԱԶԱՐ.— (Սահովին) ԲԸ՛, բԸ՛, բԸ՛, դուռը կապի: (Գլուխը  
ներս ե պահում):

ՍԱՅԹՈ.— (Դողարով զնում ե գուռք կողպելու: Ուստիան բաց ե ա-  
նում փարագույրը, վոր տեսնի դուռը):

ՆԱԶԱՐ ՅԵՎ ՄՅՈՒՄԵՐԸ.— (Դրսից բաղխում են դուռը):

ՍԵՆԵԿԱՊԵՏ — Հաղթություն, թագավոր քաջ:

ՈՒՍՏԻԱՆ. — Ա՛ մարդ, հաղթեցին:

ՆԱԶԱՐ ՅԵՎ ՄՅՈՒՄԵՐԸ.— (Բաղխում դուռը) թագավոր քաջ.  
հաղթություն:

ՆԱԶԱՐ.— (Դուրս ե նայում գանի տակից) Ո՞վ հաղթեց: ՀԸ՞ մե-  
րո՞նք են... հաղթեցին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.— (Ներս մտնելով ուրիշ դուռով) Տեր իմ, մերոնք հաղ-  
թեցին:

ՆԱԶԱՐ.— (Հանգստանում ե յել երժիշտը սրբելով դուրս ե զալիս)  
Հմ, լավ արին, վոր հաղթեցին. թե չե՞ն ե՞ն աշխարք քան-  
դում ելի (հազում ե) ԸՀԸ՛...

ԺՈՂՈՎՈՒՐԴ.— (Դրսից) Հաղթություն, կեցցե՛ թագավորը:

ՆԱԶԱՐ.— Հայ, բախտդ սիրեմ, քաջ նազար, ես ել փրկեցիր: Ե հ,  
Ուստիան, հիմի աչքդ բարին տեսնի՛ դու թալանին մտիկ  
վոր կրերեն:

ՈՒՍՏԻԱՆ.— (Խնդուովի տալով) Վ՞ուք, ի՞նչ լավ բան ե թագավոր-  
թագուհին:

ՆԱԶԱՐ.— Բաս, քեզ սրան կասեն: (Սահովին) Գյաղմ, բնաց արա  
դուռը:

ՍԱՅԹՈ.— (Բաց ե անում յել զալիս ե ներս դրուակով կանգնում  
նազարի բախտի մոս):

ՍԵՆԵԿԱՊԵՏ.— (Ներս ե մտնում նեանազգեսի զիստրկով յել առան-  
ձին ձեվերով) Արքալից արքա, նազիր, Վեզիրը, պալատա-  
կանները ընդունելություն են խնդրում:

ՆԱԶԱՐ.— Հրաման եմ առում, վոր ներս գան: (Սենեկապետը դրս  
ե յելում: Ներս են զալիս նազիր Վեզիր, զորավարներ) Ի՞նչ  
կա, ի՞նչ եք իրար անցել:

ՆԱԶԱՐ.— Թագավորն ապրած կենա: Ուրախացնում ենք ձեր  
արքայական սիրտը մեծ ուրախությամբ: Անարդ թշնամին  
խորտակված ե:

ՆԱԶԱՐ.— Շատ լավ բան ե յեղել, գյաղմ:

ՆԱԶԱՐ.— Քո աճեղավիթիսար տեսքը վոր տեսան՝ վոչնչացտու-  
մար թագավորն ել սպանված են պատերազմի դաշտում:

Մեր քաջարի զորքը, շնորհիվ քո թագավորական խելքի  
իմաստության և քաջության՝ անորինակ գրոհով տապալեց,  
թշնամուն:

ՆԱԶԱՐ.— Շատ լավ բան ե յեղել, գյաղմ:

ՎԵԶԻՐ. — Կեցցե՛ թագավոր քաջը:

ԲՈԼՈՐԸ. — Կեցցե՛ թագավոր քաջը:

ՆԱԶԱՐ. — Թագավոր քաջ: Ժողովուրդն անհամբեր ե յերկնային  
յերեսնարքդ տեսնելու: Աղաչում ե, քո հաղթության այս մեծ  
որը գոնե մի անգամ յերջանկացնես ժողովրդին և անձամբ  
դուրս գաս նրա վողջունը ընդունելու:

ՆԱԶԱՐ.— Լավ: (Վեր ե կենում յել բարձրանում պատճամք. նրան  
նետելում ե Սահով դրուակով):

ՍԱՅԹՈ.— (Ճողովրդին) Թագավորը:

ԺՈՂՈՎՈՒՐԸ.— (Դրսից) Կեցցե՛ մեր քաջ թագավորը:

ՆԱԶԱՐ.— (Չեռով նեան ե անում ժողովրդին, վոր լսեն) Շատ շնոր-  
հակալ եմ իմ ժողովրդից:

ՆԱԶԱՐ ՅԵՎ ՄՅՈՒՄԵՐԸ.— (Արտավակալելով) Ի՞նչ յերջանկու-  
թյուն:

ԺՈՂՈՎՈՒՐԸ.— Կեցցե՛:

ՆԱԶԱՐ.— Զորքին և ժողովրդին ճաշ տվեք:

ՆԱԶԱՐ ՅԵՎ ՄՅՈՒՄԵՐԸ.— Ի՞նչ առատաձեռնություն:

ՆԱԶԱՐ.— Ո՞վ ժողովուրդ: Մեր վողորմած թագավորը վոչ միայն  
հաղթեց թշնամուն իր քաջությամբ, այլ և փայլեց իր առա-  
տաձեռնությամբ: Գնացեք ճաշ կերեք և որհնեցեք թագա-  
վորին: Դե, կեցցե, կեցցե վողորմած թագավորը:

ԺՈՂՈՎՈՒՐԸ.— Կեցցե՛:

ՆԱԶԱՐ.— (Ներս ե զալիս):

ՎԵԶԻՐ.— (Առաջ զալով) Թագավորն ապրած կենա, իսկ ավամբը  
վորտեղ տեղավորենք:

ՆԱԶԱՐ.— Ամբարներում:

ՎԵԶԻՐ.— Շատ իմաստուն հրամայեցիր (Դեպի դուրս) Թագավորը  
հրամայում ե ավարը լցնել մթելանոցները:

ՆԱԶԱՐ.— Կացեք մի, կազա: Եղ թալանից հալա բերեք մի՛ Ուս-  
տիան խանումին շանց տվեք... (Սենեկապետը դուրս ե վա-  
գում յել վերադանում մանկալիկների նես, վոր բերում են  
զանազան կերպաններ, Թերթանի շալ, մետախնեղեն, զգես,  
վրսկեղեն ամանեներ յել այն) ՀԸ՞ Ուստիան խանում, ինչ  
վոր սիրտդ կուզի՛ վերցրնե: Լավ թալան ե, հախ աստծու:

ՈՒՍՏԻԱՆ.— (Զննում ե օչկած) Վախում եմ յերադ լինի:

ՆԱԶԱՐ.— Մատգ կծի:

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Կծում է մատը յեվ շրացած դիտում բալանք):  
**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—(Յերգում է) Անհաղթ Նազար, քաջն Նազար,  
 մին կզարկի՝ ջարդի հազար:  
**ՆԱԶԱՐ.**—(Նազիրին) Գյաղա, ասա ռադ ըլեն:  
**ՆԱԶԻՐ.**—(Ուզում է գնալ, բայց Սահն ինին է առաջ ընկնում յեվ  
 դիմում ժողովրդին): Դեսն արիք, ժողովուրդ, հավաքվեցք:  
 (Ժողովուրդը հավախում է): Ի՞նձ մտիկ, զբաղեք: Վոր ձեղ  
 ասում են ռադ ըլեք, եղ ժամանակ պիտի ռադ ըլեք. իմա-  
 ցմք:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Իմացանք:  
**ՍԱՔՈ.**—Դե, յալլա, հառամզաղեք: (Ժողովուրդը նեռանում է):  
**ՆԱԶԱՐ.**—(Վախեցած) Բե, բե... թազավոր և ուզում դառնա...  
**ՆԱԶԻՐ.**—Իշխան Սաքո...

(Սահն զալիս է):

**ՆԱԶԱՐ** ՅԵՎ ՍԱՔՈ.—(Վախեցած իրար են նայում) Բե, բե,  
 բե, բե..  
**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ կա...  
**ՍԱՔՈ.**—Բա... բա... բան չկա...  
**ՆԱԶԱՐ.**—Դե ռադ յեղի: (Սահն զմում է):  
**ՆԱԶԻՐ.**—Կհամարձակվենք հեռանալ, անձրկ' կենաց:  
**ՆԱԶԱՐ.**—Կացեք, գյաղեք: Եգուց առավոտ կզաք, վոր յես իմ  
 փող տերության թազավորական խոսք պիտի ասեմ: —Հի-  
 մի հրաման և ինձնից, վոր հեռանաք:  
**ԲՈԼՈՐԸ.**—Աստված պահե թազավորին: (Գնում են):  
**ՈՒՍՏԻԱՆ.**—(Երանց գնալուն սիս՝ վեր և կենում յեվ սկսում ինչ  
 վոր բան փորենի զանազան անկյուններում յեվ գտնելով մի  
 լայն կտավ՝ բերում է մեծեղ ու կապում զվալի պես):

**ՆԱԶԱՐ.**—Եղ ի՞նչ բանի յես, այ կնիկ:  
**ՈՒՍՏԻԱՆ.**—Հազիր յես իմ ձեռքով կպահեմ ու մի քնջում կտե-  
 ղավորեմ: Դու ասում ես յերազ չե: Ո՞վ և իմանում: Աշ-  
 խարք ե, մին ել տեսար գուրս յեկավ, վոր յերազ ե: Չեռ-  
 ներս մի բան ել ե կունենանք:  
**ՆԱԶԱՐ.**—Քեփ արտ, ջանըմ. բախտը կբերի: Աման, աման, այ  
 ջաման:

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Կապույտ բոկը բաշելով) Այ մարդ, խաղի ժամանա-  
 կը չի: (Թովի ծարքը Երան ասլով) Քաշի, մի պնդացնենք:  
 Քաշի... (Յերկուով բաշում են):

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ԱՐԱՐ ՃԵՆԳԵՐՈՐԴ

## ՔԱԶ ՆԱԶԱՐԻ ՎԵՐՋԸ

Նույնի պալատական սրահը

**ՆԱԶԱՐ.**—(Բազմած է բախտին. Սահն՝ նրա յետեվքը բռնել է դր-  
 շակը: Նազիր, Վեզիր, զրավարներ, պալատականներ, Տերեր,  
 Թամազա, Պուռոբուզա յեվ մյուս հոկաները կանգնած են նազարի  
 դիմացը յեվ յերկյուղած՝ սպասում են նրա խուելուն: Լուրջուն:  
 Մանկավիկներ՝ Սենեկապետի առաջնորդությամբ խնճաման-  
 ները ձեռներին մտնելով ներս զանազան ձեվերով խնճարկում  
 են նազարին յեվ ապա Սենեկապետի հետ զգուշ, ակնածու-  
 րյամբ դուրս են յելնում: Նազարը մտախոն՝ համբիչ է զցում  
 յեվ իր մեջ բաներ և ապրում: Նա լուրջ և յեվ կարենոր վճիռ-  
 ների առջեկի: Զեվերն արտասկոր են, հազում է յեվ սկսում)  
 Ի՞նձ նայեք, գյաղեք: Չեզ հրաման պիտի տան ու թագա-  
 վորական խոսք պիտի ասեմ: Շատ կոփմերի մեջ յեղա,  
 շատ կովեցի ու շատ հաղթեցի: Ես վերջին մեծ կովեց եւ  
 փառք աստծու—տեսաք, զոր ելի հաղթող զուրս յիկանք:  
 Գյաղա, ես ի՞նչ բաներ են, գյաղա, ես ի՞նչ նշանակ ե, ես  
 ի՞նչ տուրք ե, գյաղա: Ես են տուրքն ե, գյաղա, ես են ո-  
 րինքն ե, գյաղա, յես տեսնում եմ, գյաղա, վոր աստծու  
 մատը խառն ե ես ամենի մեջ: Ու աստծու որենքի մեջ եղ-  
 պես ել հատուկ ինձ համար գրած ե, վոր առեն անդամ  
 յես պիտի հաղթեմ:

**ՏԵՐՑԵՐ.**—Վկայե աստված կենդանի:

**ԲՈԼՈՐԸ.**—(Խոնարհվում են ի նաև խորին յերկյուղածության):

**ՆԱԶԱՐ.**—Ու հիմի, գյաղեք, ահա յես իմ բերնով հրամանք եմ  
 անում ձեզ, վոր իմ ցեզս սուրբ ե, ու յես աստվածալին  
 ծագում ունեմ. իմացիր, գյաղա, վոր ժողովուրդը ինձ հա-  
 մար և ծնկում, ինձ համար ապրում, ինձ համար մեռնում:  
 Ժողովուրդը պիտի աշխատի, յես ուտեմ: Դրա համար ել  
 ուզում եմ, վոր անունս մտնի յեկեղեցի ու յես սրբերի դա-  
 սը ղասվիճ:

**ՏԵՐՑԵՐ.**—Յեղիցի, յեղիցի և յեղեցի:

**ԲՈԼՈՐԸ.**—(Յերկյուղածությամբ խոնարհվում են):

**ՆԱԶԱՐ.**—Հիմի ինձ նայեք, գյաղեք: Մինչև հիմի աստված եր  
 ոգնում ինձ, հիմի իմ զործը յես իմ ձեռքով պիտի տես-  
 նեմ: Հիմի յես ամենքին կհաղթեմ: Դրա համար ել, գյա-  
 ղեք, հիմի յես ուզում եմ, վոր վող աշխարհը գցեմ վո-

տիս տակ: Ինչացու յի ևսքան տերությունն ու թագավորը:  
Յես հերիք եմ:

ՏԵՐՏԵՐ. — ՅԵԿՎ: լեղիցի:

ԲՈԼՈՐԸ. — ԱՃՇՆ:

ՆԱԶԻՐ. — Սովեր աստուծո: Յերջանիկ միաք և ծագել արքայական  
գլխիդ մէջ: Հրամայիր՝ կատարենք:

ՆԱԶԱՐ. — Հիմի յես հրամանք եմ անում թագավորական: Գնա-  
ցեր նոր զորք կապեցեք և հրաման տվեք իմ կողմից, վոր  
գողջ աշխարքի վրա, թալանի ու բերի ինձ: Ժողո-  
վրդին ել հրամանք՝ վոր նոր հարկերը տա: Իմացաք:

ԲՈԼՈՐԸ. — Իմացանք, թագավոր սուրբ:

ՆԱԶԱՐ. — Ղոռըսւղա, իմացաք:

ՂՈՌՈԲՈՒԴԱՅ. — Համմմմ, իմացա, թագավոր:

ՆԱԶԱՐ. — Այ զահրումար քեզ, քար ու քացախ: Քաղցրացրու  
ձենդ, ելի, դու ել: Զեղավ, վոր մի քաղաքավարություն  
սովորցնեմ: Հայվան: (Տերտերին) Հոգեոր տեր: Դու ել  
գնա, հոգեոր դասը առ ու խաչ-խաչվառով արի ինձ յեկե-  
զեցի տար: Ալոթք պիտի անեմ աշխարքի փրկութիւն հա-  
մար: (Բոլորին) Դե, հիմի հայդե, թագավորական խորհուրդ  
ունիմ կնկանս հետ:

ԲՈԼՈՐԸ. — Աստված պահե թագավորին: (Գնում են, բացի նազիր  
վեցիցից):

ՄՈՒՆԵՑԻԿ. — (Դրսից) Պատերանանզմ... (Ուզմուկ ե լսիում, վորին  
հետվում ե դմոլ-զուռնայի ձալնիր):

ՆԱԶԻՐ. — (Դուրս ե գնում ներեվի պատօպամը) Լսեցեք. ով զորք  
ու ժողովուրդ: Մեր ազատարար և սուրբ թագավորը բաղ-  
մաթիվ թշնամիներից մեր յերկերը ազատելուց հետո՝ տատ-  
վածային սուրբ հոգու զորությամբ՝ վեր և կենում ազատե-  
լու ամբողջ աշխարհը անարժան թագավորներից: Խստագույն  
հրաման ե, վոր ժողովուրդը հարկ տա և զորքը գնա տիրի  
ամբողջ աշխարքին: Հաջողություն թագավորին և հաղ-  
թություն ձեզ:

ԶՈՐՔ ՅԵԿՎ (Դրսից) Կեցցե մեր քաջ թագավորը: (Ուզմի  
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ փողեր, յերգ, զուռնա, զենքի օտաշ, վոր նեռա-  
ժողովուրդին ենում ե):

ՍԵՆԵԿԱԳԵՏ. — (Ներս մտնելով) Ժամիս հյուրընկալության, թա-  
գուհին բարեհաճում և ընդունվելու:

ՆԱԶԱՐ. — Հը:

ՍԵՆԵԿԱԳԵՏ. — Թագուհին դալիս ե:

ՆԱԶԱՐ. — Գալիս ե՝ թող գտ. ի՞նչ ես նախրի իշի պես առաջ

վագում (Սենեկապեր գնում ե): «Թագուհին»: Աղունակի  
ձու յի: Մերաշ չփխլի՛: (Ներս ե մտնում Ռւսիանը բազու-  
հու զգեստներով):

ՈՒՍՏԻԱՆ. — (Ծանր ու բարակ առաջանալով դեպի նազարը յեկ  
երա կողին բարձ վորոնելով յեկ չգտնելով՝ ներս ե կանչում  
Սենեկապետին): Սենեկապետ. (Սենեկապեր ներս ե գալիս).  
Քյոփակ, ուր ե բարձա:

ՍԵՆԵԿԱԳԵՏ. — Վալ: բարձը չեն բերել: (Դուրս ե):

ՆԱԶԱՐ. — (Դափազանով խփում ե Սենեկապետին) Շաւն, շան վար-  
դիք: Ռւստիան թագուհին գա նստելու՝ բարձ չբերեք:

ՍԵՆԵԿԱԳԵՏ. — (Զօթելով) Հանդերձապետն ե մեղավոր, ինսպի,  
կարկուտ բարկության:

ՆԱԶԱՐ. — Գլուխը կտրեցիք: (Սենեկապեր դուրս ե գնում):

ՈՒՍՏԻԱՆ. — Մեղմ, թագուհին գալիս ե՝ նստի, բարձ չեն դնում:  
Յես կարող եմ չոր գետնին նստեմ:

ՍԵՆԵԿԱԳԵՏ. — (Ներս զալով) Թագավորն ապրած կենա: Հանդեր-  
ձապետի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ. — Հողեմ զլուխը: Շատ ել լավ արին: Արարմունքին  
մտիկ:

(Սենեկապեր դուրս ե գնում յեկ բարձ ե բերել տալիս մանկ-  
լավիկի ձեռուվ, վոր դրվում ե Ռւսիանի տակը):

ՆԱԶԱՐ. — Սրանից յետ ավելի փափուկ բարձ բերեք: Ռւստիան  
թագուհու մսերը փուխը են: (Լուրջուն):

ՈՒՍՏԻԱՆ. — Քեփդ ինչու յի խարաբ:

ՆԱԶԱՐ. — Քեփս խարաբ չե: (Ավելի լուրջ կերպարանի ե առնում):  
ՈՒՍՏԻԱՆ. — Ի՞նչ իմանամ, յերեկվանից դեսը մի տեսակ ես:

ՆԱԶԱՐ. — (Մի իջ սրբնեղ) Հանաք, մասխարություն մի գիտենա,  
Ռւստիան: Տերություն եմ զարձնում: Խելք և պետք: Եսոր  
— եսոր աշխարհքի աչքը վրաս և տնկած: Հիմի իմ ժաժ  
գալս, խնաքս, խելքս, պատիվս ամենքին որինակ ե: Արա-  
գուր մեծ խելքի տեր ենք գառնում: Հիմի յետ ուրիշ մարդ եմ:  
ՈՒՍՏԻԱՆ. — Աստված տա, ով չի ուզում:

ՆԱԶԱՐ. — (Զգիլով) Ե՛, տերության գործը շատ եր եսոր: Թա-  
ման բերգարեցի: Մի քիչ քիփ անենք: (Սենեկապետին). Ե՛,  
գլադի, այսինքն՝ Սենեկապետ: (Սենեկապեր ներս ե գալիս):  
Շամշ բեր: (Սենեկապեր գնում ե): Մի լավ ճաշ ուտենք,  
հը, Ռւստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ. — (Նաև լուրջ) Թե ուզում ես՝ ուտենք: (Ներս ե մտնում  
Սենեկապեր մանկլավիկների նետ, վոր նաև են բերում վիճի-  
ներով՝ վրան պես-պես խորհիներ, ծաղկիներ յեկ այն: Սինի-

ները դնում են Նազարի յեվ Ուստիանի առջեկ՝ խոնչայի վրա. Յերկու մասնկալիկ անցնում են Նազարի յեվ Ուստիանի բամակը՝ թեփերին յեվ ուսերին զանազան սրբիներ ու սպասում են, վոր սրան ուսեն):

**ՆԱԶԱՐ.**—Այ, եղ լավ եր: Լազար: Դե: Մի են լավաշը գեսը տվեք: (Տալիս են): Լավ լուլաքարար կփաթաթվի: Դեսը տվեք լուլաքարար: (Ուսում ե: Ուստիան նոյնպես), եռֆ: Գինի ածեք: (Սծում են): Քամի, Ուստիան, լավ գինի յի: (Մանկալավիկները բաց են անում սրբիները յեվ յեր Նազարը կամ Ուստիանը ուզում են բերանները, մատները սրբել՝ կիսովին յես են ըրչում դունչերը կամ ձեռները, ուսերի վրայից յետև են դառնում յեվ մանկալավիկները սրբում են յետելից): Ապա, մի փլավը դեսն արեք: (Հրամցվում են, բառվ բամփում ե փլավին յեվ չորս մատների ծայրով վերցնում ե դնում բերանը): Եռֆ: Լազար:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Աստված տա՞ զորքն ել մի հաղթի:

**ՆԱԶԱՐ.**—Զանը դուրս գա՞ հաղթի: Եղ ել դարդ ես անում: Յես ուրիշ դարդեր ունեմ:

**ՈՒՍՏԻԱՆ** — Ի՞նչ դարդ:

**ՆԱԶԱՐ.**—Եհ, տերություն ե, կունհնա, տերության դարդ ունիմ (Խմելով) հըմ, ծանր բան ե տերության գործը:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Զինի՞ գժարդ գալիս ե: Թէ մի-մի տերության գործը կլինի՝ ասա, յես կանեմ:

**ՆԱԶԱՐ.**—Զե, վճնց կլինի: Գլուխդ կկորցնես:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Բա ինչու քեփդ ելի խարար յեղավ:

**ՆԱԶԱՐ.**—Ի՞նչ ես ասում, ջանըմ, ապագայի վրա յե միտքս:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Ի՞նչ ապագա:

**ՆԱԶԱՐ.**—Ժառանգի բանն եմ միտք անում, վճնց պիտի լինի: Եսքան աշխարքը, վոր ձեռ եմ զցում, շներոց, գելերոց եմ թողնելու: Ժառանգ ե պետք:

**ՈՒՍՏԻԱՆ.**—Ե, թագավոր չըս, հրաման տուր՝ թող լինի:

**ՆԱԶԱՐ.**—Զե, ջանըմ, պիտի մտածենք, եղպես չի լինի: (Թուրը թիրել աղմուկ ե բարձրանում) Հա.. ի՞նչ ե...

**ՄՈՒՆԵՏԻԿ.**—(Թրսից) Հաղթությունւրություն...

**ՎԵԶԻՐ.**—{Թագավոր քաջ: Հաղթություն:

**ՆԱԶԱՐ.**—Սուրճանդակ յեկավ և հալոնեց, վոր հինգ տերություն նվաճեցինք: Զորքը աննման քաջությամբ հեղեղում ե զեպի աշխարհի բոլոր տերությունները:

**ՆԱԶԱՐ.**—Համացա: Լավ, գնացեք:

**ԱԱՐՈՒ.—Հա, հա, գնացեք:**

**ՆԱԶԻՐ.**—{ Աստված պահի թագավորին: Վեզիր:

**ՆԱԶԱՐ.**—Եղպես: Հա: (Նազիր-Վեզիր դաւր են գնում): Վոր ասում եմ՝ կոփը լավ բան ե: (Մանկալավիկներին) Ապա բըլ բուլի լեզվով տապակը գեսը տվեք: (Տալիս են):

**ԶՈՐԱՎԱՐ.**—(Ներս ե մտնում, Նազիր-Վեզիրի յեվ պալատականների հետ) Թագավորն ապրած կենա: Հարավային զորքը շփոթվեց: Մի մասը անպիտան զուրս յեկավ: Այս զորքից յոթը հարցուը հազար մարդ ջարդվեց: Թշնամին այն կողմից առաջ յեկավ:

**ՆԱԶԱՐ.**—(Վախեցած) Եստեղ ե գալիս:

**ԶՈՐԱՎԱՐ.**—Մոտենում ե տերությանը:

**ՆԱԶԱՐ.**—Լավ, ի՞նչ անեմ:

**ԶՈՐԱՎԱՐ.**—Հրամայիլը, վոր տերության պահեստի զորքը զնա:

**ՆԱԶԱՐ.**—Հրամայիւմ եմ, թնդ զնա:

**ԲՈՂՈՔԸ.**—(Ուրախացած) Աստված յերկար կյանք տա քեզ, վոր զորմած թագավոր:

**ՆԱԶԻՐ.**—(Թուրս գալով) յեպի ներեխի պատճամը) Մունետիկ, կանչիր պահեստի զորքը:

**ՄՈՒՆԵՏԻԿ.**—Եհեւ, լացեք, հրաման: Պահեստի զորքը հավաքվի: Հառաջ: (Ազմուկ, ժխոր, նոր հավախող զորքերի տրփի յեվ փողերի ձայնի):

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Թագավոր սուրբ, յերկա զորքին...

**ՆԱԶԻՐ.**—(Ներս գալով) Թագավոր սուրբ, զորքը հայրական խոռք ե աղերսում քեզնից: Մի ինայիր:

**ՆԱԶԱՐ.**—Ո՞ֆ... (Վեր ե կենում տեղից, վոր զնա յեպի պատուանիը):

**ՈՒՍՏԻԱՆ.**—Ապա ես արարմունք ե: Փլավը սառեց թագավոր մարզու: Վեր կացրիք թէ ի՞նչ:

**ՆԱԶԱՐ.**—(Թրու) Դե, ի՞նչ անենք, ժողովրդի զործ ե, թող մի որ ել նրա համար հացկառու լինենք: (Բերանը սրբել ե սալիս մանկալավիկներին յեվ մտսենում ե պատուանին):

**ՈՒՍՏԻԱՆ.**—Մեղմ, ի՞նչ զուլում բան ե: Նազարս հանգիստ չունի:

**ՆԱԶԱՐ.**—(Մոտենալով պատուանին) նազում ե:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Լացեք, լացեք:

**ՆԱԶԱՐ.**—Գնացեք, կովեցեք հայրենիքի փառքի համար:

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.**—Կեցը:

**ՆԱԶԱՐ.** — Դե, գնացեք, գնացեք, լալմ: (Բոլորը զնում են դուրս) բնչ եկի ասում: Իշխ կտորներ: Թողնում են, վոր մարդու միտքը տեղը մնա: Հա: Փլավից ել մի քիչ դեսն արեք: (Հրամցում են. ուսում ե) Յոթ: Գինի լրուք: (Նազիր, Վեց զիր, Զորավարյեվ պայտանակաները ներս են վազում):

**ՆԱԶԻՐ.** — Թագավոր քաջ: Հազար լոթը հարցուր գունդ ելի ջարդվից:

**ՆԱԶԱՐ.** — Դրանք ել ի՞նչ հավես արին ջարդվելու: Փլավից լին քշում: (Առուրյուն) Ե՛, լավ, ինչի՞ն ջարդվում:

**ՆԱԶԻՐ.** — Զին կարողանում, տեր իմ:

**ՆԱԶԱՐ.** — Գնացեք ասեք կովեն: Զանըմ, կովկա ի՞նչ բան ե, վոր չեն կարողանում: Իշխան Սաքո...

**ՍԱՅՐՈ.** — (Վախեցած) Ի՞նչ ե, թագավորն ապրած կենա...

**ՆԱԶԱՐ.** — Մի գնա փրթի եղ թշնամուն...

**ՍԱՅՐՈ.** — Բը՛, բը՛, բը՛, բը՛, ... Գնամ:

**ՆԱԶԱՐ.** — Գնա, փրթի... (Սաբոն դուրս ե զալիս յել բազնիում դուան ինտել):

**ՆԱԶԻՐ.** — Ուրիշ ի՞նչ կհրամացիս, տեր իմ:

**ՆԱԶԱՐ.** — Հրամանք հմ անում: Ժողովրդին առաջ գցեցեք, թող գնա համ կավի, համ ել եղ հասամզազա զորքին շնորին տա մոսս բերի, տեսնեմ ի՞նչ խորհուրդ են անում:

**ՆԱԶԻՐ.** — Իսկուն կուղարկեմ ժողովրդին: (Մոտենալով պատուհանին) Մունետիկ, նոր հրաման: Կանչիր ժողովրդին:

**ՄՈՒՆԵՏԻԿ.** — Հավաքվեցէք... նոր հրաման... (Ալիւնկ յել ժողովրդի բացականցուրյուններ «յեկեֆ, յեկեֆ»):

**ՆԱԶԻՐ.** — Ո՞վ ժողովուրդ: Մեր քաջ թագավորը, վոր աշխարհ և տիրում ձեզ փրկելու համար, խստագուշնս հրամայում և ձեզ, վոր գնաք մեր քաջարի զորքին ոգնութիւն:

**ՆԱԶԱՐ.** — Դե հիմի ուղ յեղեք ու ել զահլաս մի տանեք: Տերութիւն զորքը մեաց: Կերակուրները սառեցին: Յես գործ ունեմ: Յես հաց պիտի ուտեմ: Հասկացաք, հայվաններ ել սրանից դենը քանի կջարդի՝ զարկեցեք, քանի կջարդի՝ զարկեցեք: Ու մին ել թե ներս եք յեկել ու կովի վրա խոսք եք բաց ալել՝ կարկաժներդ միջից կկիսեմ: Իմացաք:

**ԲՈԼՈՐԸ.** — Իմացանք, Սամեր Աստծո:

**ՆԱԶԱՐ.** — Հայդե, լոլլա: (Գնում են): Ե, մեր գործին նայենք: (Սենակապետին) Գլազա, արի հացը հավաքի: Ուստիան, մի

քիչ ել գնանք կտիր ծերին նստենք, դալլան քաշենք: (Սենեկապետին) Կասես վոր դալլան բերեն: (Գեպի դուրս) Իշխան Սաքը: Դրոշակը առ: (Սաբոն վերցնում ե դրուակի: Դուրս են զնում Ռւսիանի հետ: Երանց զնալուց հետո Սենեկապետը ներս ե կանչում մանկավիճերին յել հետն անում, վոր սեղանը հավատեն: Հավատում են յել հեռանում: Ապա մի վարկան դուրս զնալով, խկույն յետ ե վազում յել կրծկվելով կպչում ե վարագույրին:

**ԶՈՐԱՎԱՐ.** — (Ներս վագելով) Ո՞ւր և թագավոր քաջը: Ամբողջ զորքը թողել և ռազմադաշտը և լիտ ե գալիս:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — Գիրագույնը նարզիկն է պետքում ի պետս հայրենաց:

**ԶՈՐԱՎԱՐ.** — Շուտափութ պետք և հայտնել իրեն: Յեկ քանի վոր թագավոր քաջը մահվան սպառնալիքով արգելեց մեզ իր հետ խոսել զորքից և պատերազմից, շատ կաղաչելի, վոր ի սեր հայրենաց, ինքդ հանձն առնելիք ալդ մահը: Հայտնիր թագավորին լուրը:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — Անպատճառ: Իմ անձը հենց հայրենիքի համար եմ պահել վոր զոհեմ: Միայն խկույն չեմ կարող լուր հայտնել քանի վոր զերագույնը հենց նոր ավարտեց նարզիկի առաջին կրակը: Յերկու կրակ ել վոր կավարտի՝ կհայտնեմ:

**ԶՈՐԱՎԱՐ.** — Ուրեմն հուսամ քո անձնվիրութիւն վրա: Տեր ի՞մ: ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Կատարելապես: Տեր ի՞մ:

**ԶՈՐԱՎԱՐ.** — (Գնում ե): (Ներս են մտնում Նազիր յել Վեզիր):

**ՆԱԶԻՐ.** — (Գլուխ տալով Սենեկապետին): Տեր ի՞մ: Վեզիր. — (Վեզիրին)

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — (Գլուխ տալով) Տեր ի՞մ:

**ՆԱԶԻՐ.** — Հուսանք, վոր նոր լուրերը հայտնել ես արքային: ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Վոչինչ հայտնի չե: Դուք վորեն բան զիտեք, տարբ իմ:

**ՆԱԶԻՐ.** — Կատարելապես վոչինչ:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — Ուրեմն ի՞նչ նոր լուր ե, տարբ: Վեզիր. — Ներիր, տեր իմ: Կարծես նոր լուր ասիր:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — Վոչ, պարզապես սալթաքումն բարբառի:

**ՆԱԶԻՐ.** — Յեկ ի՞նչ ե քեզ հայտնի, տեր ի՞մ:

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — Ականջս խուլ ե և ինքս ալնքան մտազրադ:

(Առուրյուն) Խակ...

ՆԱԶԻՐ. — } Հա...  
ՎԵԶԻՐ. — }

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Բան ասիք, տյարք:

ՆԱԶԻՐ. — } Վոչինչ:  
ՎԵԶԻՐ. — }

ՎԵԶԻՐ. — Ինչպես ե քո կենցաղավարությունը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Գերեզմանիկ! Աստված պահե թագավորին (Լուս-  
բլուն) Առողջ եք, տյարք:

ՆԱԶԻՐ. — } Կատարելապես, տեր իմ:  
ՎԵԶԻՐ. — }

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Այս ժամանակ իսկուն պահիկ մի հեռանամ և  
արքային նախապատճառեմ, վոր վոչ մի լուր չկա:

ՆԱԶԻՐ. — Ճշմարիտ կետին նշանեցիր, տեր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Դուրս ե գնում դիմացից, բայց յեվ իսկուն դրսից  
մոտենալով վարագույրին՝ սկսում է այնեղից ականջ դնել:  
Յերեխում ե նրա Ֆիզուրը վարագույրի յետից):

ՆԱԶԻՐ. (Վեզիրին ցած) Զե գնացել, ականջ և դնում:

ՎԵԶԻՐ. — (Ցած) Ավելի լազ: Յեվ յերեխում ե վոր գիտե լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս ե նայում վարագույրի նեղից):

ՎԵԶԻՐ. — Այս: Ի՞նչպես տեղեկացնենք թագավորին, վոր մենք  
այդ լուրին չենք հավատում:

ՆԱԶԻՐ. — Ահա, տես, տեր իմ, յես ասում եմ, վոր ժողովուրդը  
ապստամբել և թագավորի գեմ:

ՎԵԶԻՐ. — Ահա և յես, ասում եմ, վոր խոնվում ե պալատի շուրջը:  
(Սենեկապետը վարագույրի նեղից նայում է: Նազիրը յեվ Վե-  
զիրը նույնականացնելու համար յերեխում ել բոնիում  
են յեվ անշարժ իրար յերեխի նայելով):

ՆԱԶԻՐ. — Աչքերս վշտից կարճատես են դառել:

ՎԵԶԻՐ. — Տվայտանքից կուրացածի պես եմ:

ՆԱԶԻՐ. — Ի՞նչպես ե արքայից արքան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Անդորր ինչպես ծովի հատակը:

ՎԵԶԻՐ. — Փառք ասուծո:

ՆԱԶԻՐ. — Բանի վոր կան տերություններ, վորոնց ժողովուրդը  
ապստամբում ե թագավորի գեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Այս, ալուզումն ինչ-ինչ և տվայտանք պիստիւ:  
ՆԱԶԻՐ. — Յեթե արքայի կանքին վտանգ սպառնա՝ բավական  
ե մեր մասին մտածես՝ քնած տեղից անգամ իրեն նետ-  
կթուենք ոգնության:

ՎԵԶԻՐ. — Յեվ կհաղթենք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Տյարք: Իմ սիրտն ու միտքը ստվերի պիս շրջում  
են ձեր հետքից: Կարիքի գեղքում իմ հավատքս ձեզ հետ ե:

ՆԱԶԻՐ. — } Յեվ մերը ձեզ հետ: (Գլուխ են տալիս) Տեր իմ:  
ՎԵԶԻՐ. — }

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Տեր իմ: (Գլուխ ե տալիս: Նազիր յեվ Վեզիր հեռա-  
նում են: Նրանց յետիցից) Յերեխան խաշվեց, որհնալներ,  
ուրիշը բիրեք: (Վարագույրի յետի ձայներ: Սենեկապետը  
քաջում ե նրա ձայներում):

ՆԱԶԱՐ. — (Յերգում ե) Աժան, աման, այ ջասաւան: (Իջնում ե  
կտուրից Ուստիանի հետ):

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Ներս ե գալիս յեվ կանգնում ժպտադիմ):

ՆԱԶԱՐ. — (Երան) Հը, ներս ու դուրս արա, ներս ու դուրս արա-  
մկան պես: Ի՞նչ կա ելի: Հը: Դուրս հառամդադա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — (Անօարձ կանգնած ե):

ՆԱԶԱՐ. — Զես իմանում, քափթառ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Կենաց աղբյուր, Նախկին պատերազմի յերեք  
պարտված թագավորի թագուհիները յեկել են և լուսա-  
պայծառ տեսությունդ են հացում:

ՆԱԶԱՐ. — Յերեք թագուհի... ինչ են ուզում:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. — Նազիրը գիտե, թագավոր կենաց:

ՆԱԶԱՐ. — Կանչի գա Նազիրին: (Սենեկապետը գնում ե):

ՈՒՍՏԻԱՆ. — Բան չունես: Ի՞նչո՞ղ են պետք թագուհիները: Ճամ-  
բի գնան:

ՆԱԶԱՐ. — (Բազմում ե բախտի վրա) Ոխու... Ե՞ս Փ... Հը, Ռւ-  
տիան, աշխարքի թագավոր ենք զառնում: Վո՞նց ե քո  
բանը:

ՆԱԶԻՐ. — (Ներս մտենալով յեվ մոտենալով Նազարին մի իհչ կանաց)  
Թագավոր սուրբ: Մեր թշնամի թագավորների թագուհինե-  
րը տհսնելով, վոր իրենց ամուսիններն սպանվեցին պատ-  
րագմում՝ լսելով ձեր խելքի և քաջության համբավը՝ սիրա-  
հարվել են ձեզ և յեկել են ընկնելու ձեր վոտքերը և սեր-  
հալցելու:

ՆԱԶԱՐ. — Սիրուն կտորներ են:

ՆԱԶԻՔ. — Լուսնակի տաօնը հինգը:

ՆԱԶԱՐ. — Կերթաս իմ կողմից խանութիւներին կասես, վոր իրենց  
վրա սեր եմ կապել թող ներս հրամանեն: (Նազիրը զնում է):

ՈՒՍՏԻԱՆ. — Բան եմ ասում: Զի՞ լինի վոր չկանչես:

ՆԱԶԱՐ. — Զե՞ վորդ կարող եմ: Թագավորի արք եւ Եսոր եսոր  
աղսիվ թագուհի լին:

ՈՒՍՏԻԱՆ. — Ազնիվ թագուհիս վորս ե, ջանըմ, թագուհին թա-  
գուհի չե:

ՆԱԶԱՐ. — (Հանգիս) Զե՞ կա խամ թագուհի, կա աղսիվ թագու-  
հի: Ազնիվ թագուհին աշխարփի թագուհին ե:

ՈՒՍՏԻԱՆ. — Ե՞ բան չունես: Բան եմ ասում: Ճամբի գնան:

ՆԱԶԱՐ. — Զե, թագավորի պարտք ե: Զանս ել վոր դուրս դա-  
պիտի կատարեմ:

ՈՒՍՏԻԱՆ. — Լավ պարտք ե: Եղ ի՞նչ պարտք ե՝ մի խմանաք:

ՆԱԶԱՐ. — Բնությանս հակառակ ե, վոր չհասկացած գործերիդ  
խառնվում ես:

ՈՒՍՏԻԱՆ. — Ինչի՞ չեմ հասկանում: Լավ ել հասկանում եմ:

ՆԱԶԱՐ. — (Կեղծ գործնական լեվ հասարակ) Լսիր, Ուստիան, մի  
քիչ թագավորական գործ ունիմ, գնա մյուս ոթախը:

ՈՒՍՏԻԱՆ. — Մեղած: Սիրուն կնիկները ներս առ թե թագավորա-  
կան գործ ունիմ: Եղ եղավ թագավորական գործ:

ՆԱԶԱՐ. — Եղպես ե, Ուստիան խանում, եղպես ե:

ՈՒՍՏԻԱՆ. — Ինչն ե եղպես: Ենպես ես խոսում, կարծես թե ես-  
տեղ թագուհի չեմ, իրավունք չունեմ:

ՆԱԶԱՐ. — (Որտեղ) Թագուհիները պիտի գտն: Տերության գործ  
ե, մի՛ ուշացնի: Գնա մյուս ոթախը: (Լուրջուն: Նազար  
սպասում ե, վոր Ուստիանը զնա: Սենեկապետը նայում է վա-  
րագույրի նեղից: Նազար տեսնում է այդ լեվ հազում):

ՈՒՍՏԻԱՆ. — (Նոր շարժումով) Ի՞նչ եմ ասում, Նազար, ի՞նչ ըլեմ  
աշխարփի աղսիվ թագուհի:

ՆԱԶԱՐ. — Զես կարող:

ՈՒՍՏԻԱՆ. — Կարող եմ:

ՆԱԶԱՐ. — Զե:

ՈՒՍՏԻԱՆ. — Ե, լավ, ի՞նչ տեսակ բան ե, վոր չեմ կարող:

ՆԱԶԱՐ. — (Յերգում ե երի տակ, կիսաս) Աման, աման այ ջաման:  
(Ուստիանին) Ծանդը բան ե թագավորական գործը, ծանդը...  
(Սենեկապետին) Ե՞լ, գլադա: (Սենեկապետ ներս է զափս)

Գնա մի քիչ անուշ ջուր բեր փչի վրաս: (Սենեկապետը  
դուրս է վազում): Ե՞ն... (Նիմծու բրիած ձեվով) Աշխարք  
թափվել ե վրաս: Հա խելք տուր, հա քաջություն բանեց-  
րու, հա ես արա, հա են արա: Տնաշեններ, մի մենակ թո-  
ղեք՝ խելքս գլուխս գա: (Սենեկապետ վազելով ներս է զա-  
լիս մանլավիկների նես, վոր փչում են անուշանս ցենը լեվ  
շապան նեռանում):

ՈՒՍՏԻԱՆ. — Լավ, եղ վոր ուրիշների լիս բերում, ել չես սազա-  
կան թագուհի չեմ:

ՆԱԶԱՐ. — (Լեզուն ծրպացնելով) ԾՇ:

ՈՒՍՏԻԱՆ. — Ինչի՞ համար:

ՆԱԶԱՐ. — Ենդուր:

ՈՒՍՏԻԱՆ. — Զե, ասա՞ մի տեսնենք ինչի՞ համար:

ՆԱԶԱՐ. — Յես աղսիվ ցեղից կնիկ պիտի առնեմ, վոր ցեղս իս-  
կը աղսվանա:

ՈՒՍՏԻԱՆ. — Ապա եղ անելու բան ե, վոր անում ես:

ՆԱԶԱՐ. — Մենք անող ենք, Ուստիան խանում:

ՈՒՍՏԻԱՆ. — Զե, չեմ թողնի վոր անես:

ՆԱԶԱՐ. — Արտունը գլուխս մի խփիլ տա, թե չե վեր կացա,  
համար... Գլուխս մի տանի: Մի քիչ աղսիվ ցեղի պիտի  
խառնվիմ: Ժամանակ չունեմ: Բանիդ գնա:

ՈՒՍՏԻԱՆ. — Զանըմ, ի՞նչ աղսիվ ցեղ, ի՞նչ բան: Սիրտը ուրիշ  
կնիկ ե ուզում եղ ասա... Արարմունքդ հասկանում ես...

ՆԱԶԱՐ. — Խաղաղություն ամենեցուն: Կարճ կապի:

ՈՒՍՏԻԱՆ. — Հետները պիտի պատկին: Եղ ե: Ել կարճը վորն ե,  
լերկարը վորն ե: (Լուռ ե) Լավ, հիմի լիս ի՞նչ պիտի անեմ:

ՆԱԶԱՐ. — Յես ի՞մ: Փող, ապրանք կտամ, զնա գեղը:

ՈՒՍՏԻԱՆ. — Բոռ... եսաեղից հեռացողը չեմ:

ՆԱԶԱՐ. — Կերթաս, Ուստիան խանում, կերթաս:

ՈՒՍՏԻԱՆ. — Զեմ երթա: Ղալմաղալ կանեմ:

ՆԱԶԱՐ. — Ի՞նչ զալմաղալ:

ՈՒՍՏԻԱՆ. — Կասեմ՝ վախկոտ ես:

ՆԱԶԱՐ. — Ո՞վ ե վախկոտ:

ՈՒՍՏԻԱՆ. — Դու:

ՆԱԶԱՐ. — Գտամը վախկոտը, աշխարքներ եմ զարգանգեցնում:

ՈՒՍՏԻԱՆ. — Ուիններ են ջանըմ, դադարի բան ե: Տեսնես ինչ  
ֆանգեր ես բանացրել: Հիմի վոր բաց անեմ, վորնց ե բանի:

ՆԱԶԱՐ. — (Հարձակվելով Ուստիանի վրա) Ո՞ւ, քեզ հիմի, հառ-

ուամ... մմ... (Խոսքը կիսատ' ներս են մտնում նազիր, վեղիր, Սենեկապեր, պալատականներ, Թամայա, Դորոբուդա յեվ նրանցով շրջապատված յերեք բազուիններ, վոր ժպտալով ու խունչիկ-մունչիկ անելով առաջ են գալիս յեվ բարեվ բռնած կանգնում նազարի առջենք. Ուստիանին՝ դեմքը քրվեցնելով յեվ կերծ գործնական) Ուստիան, ժողովք եւ հիմի, գլուխներս խառն եւ, մի քիչ գնա են ոթախը:

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Կեղծ բաղաբավարի) Հա, ժողովք եւ Լավ: (Վեր ե կենում, վոր դուրս գնա աջ կողմից) Վոչ բարով վայելս: (Խեր նայում ե նազարին):

**ՆԱԶԱՐ.**—(Կասկածով նայում ե Ուստիանին յեվ ինչ վոր ուզում ե անել, բայց բազուինների տեսքը ըլացնում ե նրան յեվ նա նրանց նայելով մտուանում ե Ուստիանին):

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Հեռանալով աջ կողմից՝ մի անգամ ել մտիկ ե տալիս բազուիններին յեվ մրբմրբում) Լրբերին մտիկ, սիրահարվել են... հողեմ ձեր գլուխը: (Դուրս ե գնում):

**ՆԱԶԱՐ.**—(Ժպտալով) Սրանք են թագուհիները. ինչ ել փամփուկներն են: Նստեցեք: (Թագուհինները նստում են) Այ, ճիմք բաղչում սուփրա կրանան, գնանք ծաղիկների մեջ նստենք, քեֆ անենք: (Սենեկապետին) Գյաղա: Գնա ասա լավ չարազով սուփրա զցեն: Սազանդար կանչի, զան մեզ բազատանեն: (Սենեկապետ գնում ե յեվ իսկույն վերադառնում: Պալատականներին) Դուք ել մեզ ճամբու. կդնեք բաղչա ու հետո կերթաք ձեր գործին: Տերության գործերին լավ աչք կւծեք, գործերը կարգին, թե չե՞ կաշիներդ մաշկել կտամ, հառուամզադաներ: Համա: իմացաք:

**ԲԱԼՈՐԸ.**—Իմացանք, կենտրոն տիեզերաց:

**ԴՐԱՌԵՌՈՒԴԱ.**—Համմ, իմացանք:

**ՆԱԶԱՐ.**—Քեզ ով ասավ բռոսաս խանումների մոտ, իշխ կտորւ (Դիմում ե բազուիններին) Ե՛, խանումներս, վժնց եք, քեփներդ, հալերդ:

**ԹԱՐԻՒՀԻՆՆԵՐ.**—(Խունչիկ-մունչիկ անելով ծիծաղում են):  
(Ներս են մտնում սազանդարները յեվ խոնարի վողունում են նազարին):

**ՆԱԶԱՐ.**—Ապա, գյաղա, մի չերաթի վեր քաշեք տեսնենք: Խանումներ, գնանք: (Թագը ծուռում ե զլսին: Թագուհինները բրջում են: Սազանդարները նվազում են յեվ յերգում Հերարի):

**ՈՒՍՏԻԱՆ.**—(Ներս մտնելով՝ սկսում ե ականջ դիել նվազին, նետք

առաջ ե գալիս դեպի նախարեմ) Հը... (Սազանդարները նվազում են Հերարիի զլամբը յեվ ապա մեղմացնում նվազը: Ռւսիանը առաջ գալով) Տեսաքը զուք փալնքոտ նազարին: Յերկու եշի զարի չեր կարում բաժնի: Տեսաքը ինչ փառքի հասա՞վ: Միտք ես անում, միտք, ես աշխարհի բանը, ճաքում ես, տրաքվում թե ախր ես բանը վժնց ելինում: Չեմ իմանում, բախտ ե, ելի: (Սազանդարները նվազում են զլամբը յեվ մեղմացնում): Տեսաքը վժնց ե սարսաղացրել աշխարքն ու վրան ծիծաղում թե աշխարհը սարսաղ լեկել ե ու սարսաղ պիտի գնա: Դու են սարսաղներին ասս թե վժնց են կատու կարել եղ նապաստակի տուաջին: Բախտ ե, ելի: (Սազանդարները նվազում զյաֆը յեվ մեղմացնում: Թագուհինները բրջում են կարուի վրան մեջ): Հա, մեծ գործի վրա լեք: Բախտավարներ: Հոգեմ ձեր անամոթ գլուխը: Նա ել վոր յերեսին ամոթ չունի: Հըմ: (Մասձելով ու զլուխը բախտ ասլով) Դու եղ թռն՝ բախտ ամբիկ, վոր միշտ բերում ե: Բախտ ե, ելի: (Սազանդարները նվազում են պար: Թագուհինները ներբով պարում են):

**ՆԱԶԱՐ.**—Այ ջան... (Ինքն ել ե պարում):

**ՈՒՍՏԻԱՆ.**—Կաց, յես քո ապուրը կեփեմ: (Անկյունից վեցնում ե մահակը):

**ՆԱԶԱՐ.**—Աման, աման, այ ջաամն...

**ՈՒՍՏԻԱՆ.**— (Մահակը ձեռին ներս վագելով) Ե՞ղ ե քո թագավորի ժողովը, համ... (Մահակը խփելով զլսին) Կեր, քոփակ... (Թագուհիններն ու սազանդարները փախչում են դուրս):

**ՆԱԶԱՐ.**—Բէ, բէ, բէ, բէ... (Փախչում ե մի կողմ: Ուստիան ընկնում ե նրա հետեւից, բայց նկատելով ներս մտնող Սենեկապետին՝ զապում ե իրան յեվ նես հաւառում: Նազար՝ նստելով զահին, վուները ծալապատիկ բառում ե իրան) Գյաղա, Սենեկապետ, կանչիր նազիր-վեղիրին... յես զանգատ ունեմ տերության: (Սենեկապետը գնում ե):

**ՈՒՍՏԻԱՆ.**—Խորեմ թագավոր գլուխդ...

(Սենեկապետ վերադառնում ե նազիր-վեղիրի, Զորավարի յեվ պալատականների հետ):

**ՆԱԶԱՐ.**—Հրամալի՛, կենարն տիեզերաց:

**ՆԱԶԱՐ.**—Յես հրամալում եմ, վոր... (Ուստիան իսք նայում ե իրան: Նազար զապում ե իրան յեվ լրում) Հըմ... (Սակայն համբերույրունից դուրս զալով) Բէ, ... (Վեր ե բռչում. նստած) Բէ... (Վեր ե բռչում) Ե՛, ինչ ե, թագավոր չըմ, բերանս

պիտի գոցեմ... (Դրսից աղմուկի ձայն է զալիս: Դուռը ծեծում են): Գյաղա, ևս ժողովրդու ե, ի՞նչ ե, ի՞նչի՞ յե կանգնել ենանեղ: Կոխվ չե՞ գնացել:

ՆԱԶԻՐ.—Վճ, տեր իմ, պալատի վրա յե հարձակվում:

ՆԱԶԻՐ.—Յա... ի՞նչ ե ասում: Գյաղա, եղ ով ե իմացել՝ թագավորը հրամանի, ժողովուրդը կոխվ չգնա: Դոլամներս ուր են, գյաղա, հոկաներն ուր են: Ասեք գնան ժողովրդին հետացնեն:

ՈՒՍՏԻԱՆ. — (Բամբելով զիսին) Ցիւմ գլուխդ, դու գնա, նրանց ուր ես զարկում:

ՆԱԶԻՐ.— (Վախտի նայում է Ռւսիանին: Խոկ պալատականները սարսափում են Նազարից յեվ սպասում թե հա ի՞նչ կանի: ՈՒՍՏԻԱՆ. — Դուք ել մարդ զտաք վախենալու: (Մահակը բարձրացնում է յեվ նարձակվում Նազարի վրա: Խփելով) Առ, քոփակի.. (Նազարը փախչում է դուրս: Պալատականները օսմում են):

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ. — Տյամբք, սա ի՞նչ ե, վախեցմագ...

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏ. — Ի՞նչպես կարող ե, սրա մեջ մի խորհուրդ կա: Հիմի հրաշք կպատահի:

ՆԱԶԻՐ. — (Եեր վազելով՝ Ռւսիանի հետեւից) ԲԵ, բԵ, բԵ, բԵ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏ. — Հիմի հրաշքը կպատահի:

ՈՒՍՏԻԱՆ. — (Մահակն իջեցնելով Նազարի զիսին) Թաղեմ գլուխդ... (Նազարը փախչում է աջ):

ՄԵՆԵԿԱՊԵՏ. — (Վազելով դեպի Ռւսիանի) Համեստափալլ թագուհի...

ՆԱԶԻՐ. — Կալծերդ կհանհմ... (Վազում է ձախ):

ՄԵՆԵԿԱՊԵՏ. — (Վազելով դեպի Նազարը) Թագավակն քաջ...

ՈՒՍՏԻԱՆ. — (Վազելով Նազարի հետեւից յեվ մահակը խփելով) Խորեմ գլուխդ:

ՄԵՆԵԿԱՊԵՏ. — (Վազելով Երս հետեւից) Համեստափալլ թագուհի...

ՆԱԶԻՐ. — Կառը-կտոր կանհմ. . . (Վազում մտնում է գանի տակ):

ՄԵՆԵԿԱՊԵՏ. — (Վազելով դեպի հա) Թագավակն քաջ...

ՈՒՍՏԻԱՆ. — (Մահակը կօխում է գանի տակ) Կրեմ գլուխդ...

ՆԱԶԻՐ. — (Դուռը բռչում զանի տակից յեվ մահակը բռնելով) Հերիք չեղավ, ամոթ չունես:

ՈՒՍՏԻԱՆ. — Ամոթը ի՞ն պիտի ունենամ, թե՞ դու (Յերկուսն են հեվում են: Նազարը նսում է զանին): Կեր, եղուս: Ցիւմ թագավոր գլուխդ:

Դուռը բաղխում են: Առուրբուղա յեվ մյուս նոկանները ներս են վազում):

ՆԱԶԻՐ. — Եսպես չի լինի, եկ, գլաղեք, գնացեք, կռվեցնք, Սենեկապետ, գնա, Զորապետ, Նազիր-վեղիր, գնացեք... Իշխան Սաքո, առաջ լոնկիր, սրանց տար:

ԲՈԼՈՐԸ. — Իշխան Սաքո, հառաջ...

ՆԱԶԻՐ. — Հա, հա, դուք առաջ լոնկիր, յես հետեւից մնացած կանեմ...

ԲՈԼՈՐԸ. — Հառաջ, իշխան Սաքո, հառաջ, տէալք, հարձակվեցեք: (Սաբոյն բում են դուրս, իրենի ել սրեր հանած վազում դուրս):

ՆԱԶԻՐ. — Եհեր... քեզ տեսնեմ հիմի, քաջ Նազար... դե ճղի... (Կողմանակի մուտքից վազում է դուրս):

(Դուռը կոտրում են: Նազիր, Վեզիր, Զորապետ, Սենեկապետ, մյուս պալատականները, բազուհիները, նամիւսները, մանկավիկները յեվ պալատի բոլոր ծառաները, սազանարները Սաբոյի հետեւից հետ են փախչում յեվ սփորված մի ռոպե կանգնաւմ):

ՆԱԶԻՐԻ ՀԵՌԱՅՈՂ ԶԱՅՆԸ. — Աման...

ԲՈԼՈՐԸ. — Տեսաք հրաշքը... (Դուրս են վազում Նազարի փախած դունոյի):

ՈՒՍՏԻԱՆ. — (Եր պարկով հետեւայի ե նրանց): Բա վոր ասում եմ յերանի ե...

(Ճողովուրդը ներ ե զուտ, Բենի մրգում ե):

ՎԱՐՍԳՈՒՅՑ



ՀՀ Ազգային գրադարան



NL0756917